



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4777

282

π - 92

π α λ η υ

1870


2010

282
7-82

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ
ՎԱՏԻԿԱՆԱՅ

ՆԱԽԱՇԱԻԻՂՔ ՆՈՐԱ
ԵՒ ԿԱԶՄՈՒԹԻՒՆ

*Տէջն Երևանի և Բաղնաձորի
Սրբա-Յովսէփ շէքիանի*



2001

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՃԵՄԻՅԵԹԻ ԻԼՄԻՅԷ

1870

11000

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՍԻՍԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ



1395
39

1878

282
Բ-48 48



ՅԱՌԱՋԱԲԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԻՆ

Ինչու աս թարգմանութիւնը, ի՞նչ կայ մեր եւ վատիկանու ժողովին մէջ. միթէ օրագիրները ամեն օր տեղեկութիւն չե՞ն տար ժողովքի մը վերայ, ուր բազմախումբ եպիսկոպոսունք ժողովուած, մարդու մը՝ աստուածութեան վերջի պատիւն ալ պիտի նուիրեն :

— Այս թարգմանութիւնը աւուր պատշաճի մըն է այս պարագայներուս մէջ ժողովրդեան մը համար, որ կ'սկսի նոր իմանալ 30 տարու ընէ վերջը իւր տառապանաց սկզբնապատճառը. մեզի պարտք համարեցինք անկողմնասէր եւ հմուտ մարդու մը դրութեամբ իմացնել թէ ի՞նչ է Հասուն, այսինքն Պիոս, այսինքն Պապը կամ Պապութիւնը եւ կամ որ նոյնն է Հռովմ. մեզի համար այս երկու անունները շատ տարիներէ 'ի վեր մի եւ նոյն նշանակութիւնը ունին, բայց ժողովրդեան համար նոյնը չըլլալուն՝ շատոնցունէ պարտք մը կը համարէինք իրեն իմացնել. բայց մեր սրտերուն վիճակը նայելով կը վախնայինք որ չափազանցութեան սողիւտ չը ձգեն մեր վրայ. եւ որովհետեւ այս վտանգէն խուսիչ դատանք, որ մեր տալիք տեղեկութիւնները բաւական կուտար, իրեն թողուցինք պաշտօնը :

Մեր սրտերուն վիճակը ըսինք. եւ ի՞նչ զարմանք թէ որ մեր սրտերուն վրայ ան խաղաղութեան անոյշ հովը չը փչէր, որով Աստուած եղիտի կերեւայ, այլ ան հուրը կը բորբոքի որ Բահազու սեղանը եւ քուրմերը կը լափէ. մեր սրտե-

ըը վրդովեալ են, վասն զի Աւետարանին խաղաղութիւնը խռովութեան դարձած է մեզի համար, եւ անոնք որ Քրիստոսի սուրբ Հոգին պիտի տան յին՝ քանի՛ քանի տարիներ եղաւ որ ատելութեան թոյն կը շնչեն, նորովք կը կարդան փոխանակ որ կը պարտէին « օրհնել եւ մի՛ անիծանել » : Անոնք որ մեզի Քրիստոսի « քաղցր եւ փոքրոգի լուծը պիտի տային » փարիսեցիներուն « ծանր եւ դժուարակիր բռնները կապեցին » : Անոնք որ « մի ի փոքրկանց դայթակղեցնել » պիտի զգուշանային Քրիստոսի « վայ » են սարսելով ամբողջ ժողովուրդ մը իր քահանայներով եւ եպիսկոպոսներով դայթակղեցնելն չը վախցան :

Եւ այս ժողովուրդը այն է որ անկէց քառասուն տարի առաջ երեք չորս բառի համար, երեք չորս վերացական բառերու համար, որոնք ո՛չ կը հասկնար եւ ո՛չ գիտէր, միայն իր քահանայներուն խօսքին հետեւելու համար, բաժնուած իր հայրենի եկեղեցիէն՝ աղքատութիւն, աքսոր յանձն առնելով կերթայ ձմեռուան ձիւներուն եւ փութերուն իր խեղճութիւնը անկարեկիր եզբայրներու արհամարհանացք մատնելու, մինչեւ ապագային մէջ նաեւ :

Եւ այս այն խոստովանող ժողովուրդն է հիմայ, որ ոտնհար կը թառալի Առաքելեաններու, Բլիսմներու, Հասուններու եւ Պիոսներու բանադրանաց, կախակայութեանց աղբիւսին մէջ, միայն անոր համար որ իր Լուսաւորչական հայրենի եկեղեցւոյն տգիտութեանը մէջ բաժնուած ատենը Հռովմ իրեն շատ լուսաւոր երեւցեր է դժբարդութեամբ : Ի՞նչ սիւն լուսոյ, ի՞նչ երկիր ա-

ւետեաց քառասուն տարուհնէ վերջը զոր կը վաշելեմք :

Եւ դարձեալ այս ժողովրդեան համար է նաեւ որ Հասունի ձեռասուն եւ աշխոյժ վարդապետներէն մէկը քանի մը օր առաջ կը զրուցէր թէ « այս ապականեալ սերունդէն մեզի յոյս չը կայ, մեզի համար փտեալ անդամ է ասիկայ. ապագայ սերունդը զոր մենք պիտի դաստիարակենք, երբ դպրոցներուն կառավարութիւնը ձեռքերնիս անցընենք, պիտի ըլլայ ճշմարիտ Հռովմէական ժողովուրդ մը, բարեպաշտ եւ հնազանդ » :

Հնազանդութիւն, իրօք՝ առաքինութիւն մ'է երբ բանական մարդուն մտաց համոզման վրայ յեցեալ է. բայց կոյր զլուրայն հնազանդութիւն՝ բանական էակին առաքինութիւնը չէ, եւ այս է մեզմէ պահանջուածը :

Մեր բարեմիտ ժողովուրդը՝ Հասունին հետ կուղէ վտարել զփառասիրութիւնը եւ զյափշտակութիւնը որ երբեմն Պօլտոյ նախագահական աթոռը համալինեց, բայց մեր գիտուն վարդապետք եւ եպիսկոպոսունք ի՞նչ կրսեն իրենց խղճմտանքին խորերուն մէջ Հռովմ Պապին համար, որ տիեզերական Պատրիարքի անունը յափշտակած իր նախորդէն, մեծին Գրիգորի դատապարտութեան վրէժինդիր ձայնը չը լսէր :

Կուղէ հեռացնել տգիտութեան եւ ասելութեան պաշտպանն ու նիղակակիցը որ զՀամալգեաց ընկերութիւնը կը հալածէր, եւ չը գիտէր թէ Գալիլէոսէն մինչեւ Շաղօպուխանի Ոչէ ֆրէստի հալածուած եւ դատապարտուած են Պապերէն :

կուղէ զըսարառութիւնը , նախանձը , քսութիւնը անհետ ընել՝ որ վենեակայ Մխիթարեանց հարուած հարուածի վրայ իջեցնելով, հերձուածող խռովարար պատամբ եկեղեցւոյ եւ տերութեան եւ մտորեցուցիչ երկոսասարգութեան կ'աջատանէր . չը գիտեր թէ Հռովմայ Պապերը գարուն ու գին՝ ուսմունքը պատմութիւնը՝ փէլ խոսիւայութիւնը՝ Գաղղիոյ յեղափոխութեան 89ին սկզբունքները՝ Նարոյէոն եւ իր օրինաց մատեանը եւ մինչեւ արհեստները եւ երկաթուղիները նըսլած են եւ գատապարտած :

Կուղէ սուտը եւ նենգութիւնը ջախջախել ու մտքով կամ մարմնով հիւանդին մտ գողունի թափառելով, սրբազան աղբեցութեան դիմակով քօղաւորեալ, կոսկներ կը շինէ՝ կը խտրուանէ, այրին եւ սըբը կը զրկէ ի շինութիւն եկեղեցեայ, եւ չը գիտէր թէ Հռովմայ Պապերը չեն խորշած սուր, հուր, շինծու կոնդակներ եւ տիեզերական ժողովոց վճիռներ անխիղճ գործածելէն, սուրբ Պետրոսի աթոռը հոգեւորական իշխանութեամբ ճոխացնելու համար :

Կուղէ այս կրօնամուտ պատուարը կործանել, որ եկեղեցիէն դուրս նաեւ՝ չէ թէ միայն օտարաղբ դիք, այլ նաեւ համարիւն եւ համալեզու եղբարք իրարու թշնամի կը կազմէր, եւ չը գիտէր թէ Հռովմայ Պապերը այս Հռովմեական զանգուածը շինելու եւ շարունելու համար միլիոնսուր քրիստոնէից արեան գետեր քայլուցեր են :

Կուղէ վերջապէս՝ խարդաւանանքն ու գողութիւնը՝ որ կաթողիկոսական եւ Պատրիարքական աթոռին վրայ բարձրայան՝ անհետայնել,

բայց չը գիտէր եւ չուղէր դիտնալ թէ Հռովմայ Պապին սկզբամբ եւ շորհիւք եւ հրամանով եւ ազդեցութեամբ ամէն բան կը լլար եւ Հասուն արբանեակ մ'էր եւ գործադիր, անոր համար ալ այնպէս կը վարձատրէր Պապ զինքը, ինչպէս կայսր մը իւր յաղթող զօրապետներէն մէկը կը փառաւորէ, եւ քահանայապետական գաղանի խորհրդեան մէջ, իրր կարդինալաց՝ եկեղեցւոյ իշխանաց մէջ այսպէս կը խօսէր . « Յարգելի եղբայր Անտոն Հասունեան՝ ՚ի վաղուց հետէ յանձին ցուցեալ է չքնաղ հանդէս կրօնից, աստուածապաշտութեան ողջամիտ եւ փրկարար վարդապետութեան, հաւատարմութեան եւ մեծարանաց առ մեզ եւ առ այս Աթոռս Պետրոսի, որպէս եւ զհաւաստիս եպիսկոպոսական արիութեան ՚ի պաշտպանութիւն իրաց կաթողիկէ կրօնից եւ աղատութեան եկեղեցւոյ, յոր սակս արժանի իսկ է Պատրիարքական պատուոյ եւ բաւական ՚ի նորոգել առաւելապէս զեկեղեցական բարեկարգութիւն » :

Եւ այս լի գովութեամբ խօսքերը այն մարդուն էին, որու համար շատ տարիներէ՝ ՚ի վեր շարունակ ամբաստան աղբսագիրներ՝ դանդառանաց յիշատակարաններ տեղեկացուցեր էին Հռովմ, այս ժողովրդեան կողմանէ, երբ ինքը՝ Հասուն՝ հանդարտ սրտով մաքուր խղճմտանքով, նման այեկոծեալ նաւուն անխռով նաւապետին՝ կը քշէր կը տանէր նաւը իւր նպատակին, ոչ մրրկին կատաղութեան եւ ոչ ճամբորդաց յիմարութեան միտ դնելով եւ կասելով :

Ահա Հասուն, ահա Հռովմ. տա՛ր Աստուած որ երկուքն ալ անցեալին տխուր յիշատակները ըլլան մեզի համար :

Իսկ ապագան եւ ինչ որ ընելիք կայ գրուցենք համարձակ : Կարելի է թիչ ժամանակէն բարձր քրիստոնեայ ժողովուրդք մեծ եւ պղտիկ պիտի ելնեն, քրիստոսի մեծ ազատ եւ իրօք ընդհանուր եկեղեցին կազմելու . սկսինք ուրեմն մենք ալ այս մեծ շէնքին պղտի քարը պատրաստել, վասն զի «վէմն, զոր անարդեցին շինողքն, նա եղև զըլուխ անկեան» : Արեւելեան կաթողիկէ Հոյ+ անունը առնող ժողովուրդք, պէտք չէ ատրօրինակ ապշութեան օրինակ մը ըլլալով (դարձեալ ես Հըռուովմէական եմ) գրուցելու նախատինքը յանձն առնէ, եւ քծնի զինքը վարող արհամարհոտ ոտքին փռչոյն մէջ թաթաւելով՝ այլ սկսի շուտով,

Նախ, իւր Հռովմ՝ բանտարկեալ եպիսկոպոսները ուղէ եւ հրաւիրէ ճշմարեա Սինօք մը կազմելու՝ ի Պոլիս, եւ շինելու իւր եկեղեցւոյն սահմանադրութիւնը, հաստատեալ Աւետարանին եւ հին եկեղեցեաց վրայ որ մայր եւ դայեակ եղած են իւր հայրենի եկեղեցւոյն վարդապետութեանցը :

Երկրորդ, ինչ որ Օսմանեան Տէրութեան մէջ սահմանադրական իրաւունքներ կը վայելին իրեն նման հասարակութիւնք՝ խնդրէ եւ գործադրէ . վասն զի ժողովուրդ մը, որ առանց իւր հաւատքէն եւ դաւանութենէն հեռանալու, գիտէ Հըռուովմայ անպիտան կայծակներն արհամարհել կըրնայ իւր ազգին եւ բոլոր քրիստոնէից եւ բոլոր մարդկութեան եղբայր անունը տալ եւ ոչ մէկ Աստուծոյ արարածը ատել եւ արհամարհել :

ՅՈՎՍԷՓ ՇԻՇՄԱՆԵԱՆ



Տ Ի Ե Զ Ե Ր Ա Կ Ա Ն Ժ Ո Ղ Ո Վ
Վ Ա Տ Ի Կ Ա Ն Ա Յ

Ն Ա Խ Ա Շ Ա Ի Դ Բ Ն Ո Ր Ա Ե Ի Կ Ա Զ Մ Ո Ի Թ Ի Ի Ն



1869 Գեկտեմբեր 8 ին՝ Հռովմ՝ ամենէն հոյակապ տեսարանաց մին կը ներկայացնէր : Այն պիտի շքեղութիւն չը պիտի տեսնեն երբէք անոնք որ ականատես էին Տիեզերական ժողովոյ հարց թափօրին, որ « եկ չողի սուրբ » տաղին երկնազդեցիկ նուագայն ընկերակցութեամբ՝ դէպ ի ժողովատեղին կը յառաջանար : Ամէն Հռովմէադաւան ժողովուրդ հոն իր ներկայացուցիչն ունէր, Հիւսիսային Ամերիկէն սկսեալ մինչեւ Արեւելից վերջին ծայրերը . Ասիացին, որոյ դէմքը վեհ անդորութիւն կ'արտայայտէ, առաքելական քարոզիչը, իւր երկար մօրուքով, քովէ քով կը քալեն Մեզղիացւոյն, Գերմանացւոյն ու Իսալացւոյն, որոյ գէմքը նըրբին ու ազդու տեսիլ մ'ունին : Նոյնիրապետութիւնն համօրէն աչաց առջև կը հղանէր զերդ շլթայ մը անհուն : Երբ հարք բաղմեցան ու Պապն աւուր պատշաճի սաղմոսները երգեց, ժողովոյն տեսիլն ի յուշ կ'ածէր Մոլթէ Օթմանայն հիանալի որմանկարը, որ նոյն իսկ վատիկանայ մէջ է : Բիւր սրտայոյղ ձայներ խառնեցան զքեզ Աստուած դովաբանեմք երգին, որոյ սքանչելի նուագակցութիւնը, Միշէլ-Անժայ կրկին

գմբէթներուն տակ հնչելով, կարծես հին աւանդու թեան արձագանքն ու արդի եկեղեցւոյ ձայնն էր միանդամայն :

Եւ սակայն այս ժողովը որուն այնչափ եռանդեամբ կրօնականներն ի Հոռովմ, եւ որ այնչափ մեծաշուք հանդէսներով կը սկսէր, Հոռովմեական կրօնի էն ծանրակշիռ ճրգնաժամներէն մին կը յայտնէր : Կը հաւաքուէր այն պահուն՝ յորում ազգի ազգի պարագայներ վտանգը եւս քան զեւս կանգնէին : Ժողովոյն սկզբնաւորութեան օրը տեսնուած համաձայնութիւնը չ'էր կրնար ըստ բաւականին ծածկել գաղափարաց ու միտմանց խորին տարբերութիւնը, մանաւանդ անդիմադրելի հրատարակութեան ժամանակի մը մէջ, յորում ըստ բանից Աւետարանին, ամենէն աւելի ցած ձայնով եղած խօսակցութիւնք տանեաց վրայ կը քարոզվին : Ես մարգարէ չ'եմ. շատ կարելի է սր միութիւնն յաղթանակէ, եւ ժողովը նմանի այն երգեհոնաց . որք խառն ի խուռն նուագներով կը սկսին վերջապէս կատարեալ ներդաշնակութիւն մը յօրինելու համար . սակայն դեռ հասած չ'ենք այդ երջանիկ վայրկեանին որոյ անվրդով պէտք է սպասեն անոնք՝ որոնք, ժողովոյն յաստուածուստ ներշնչեալ ըլլալուն հաւատով, չ'ունին եւ ոչ իսկ իրաւունք անհանդիստ ըլլալու : Ապահով եղող եպիսկոպոսներ քիչուր են . մեծադոյն մասին մէջ կը գտնուին անոնք որ անքոյթ վտահելով ստոյգ յաղթանակի մը, յոյժ տրամադիր է կանխաւ Աստուածային նկարագիր մը տալու իւր կարծեաց . այլ Յրանսայի ու Գերմանիոյ եկեղեց-

եաց մէջ, այն երկիրներուն մէջ՝ յորս ռամիկ կրօնամոլութիւն կամ խորհրդամոլ ստրկութիւն մը չը թաղաւորէր, Հոռովմեական կրօնից աղետադայն ներկայացուցիչք անձկութեամբ դէպ ի Հոռովմ կը նային : Չափազանց տաղանապաւ մը, որ լուսաւոր կրօնասիրութեան մ'արդիւնք է, ամլութենէ զատ բան չ'են համարձակիր յուսալ ժողովէն : Եթէ ամուլ չ'ըլլայ, այսինքն եթէ վարդապետէ, կախ խնդրոց վրայ մծիւ հաստանէ աներկիտ, դիտե'ն անտնք թէ ի'նչ աղդեցութեանց տակ պատգամներ պիտի արձակէ անի : Ասի յայտնի կերեւնայ անոնց հրատարակած ակնածական աղղարարութիւններէն՝ ինչպէս եւ լուութենէն : Անօգուտ է իրաց ճշմարտութիւնը սքօղել : Այս է ճշմարտութիւնը, եւ ոչ այլ ինչ : Ասկէ զատ, վատիկանայ ժողովոյն համար պատրաստուած խնդրոց ցանկը՝ չը պատկանիր լոկ կրօնական խնդրոց, որոց վրայ անշատ են կարծիք . այլ կրսեթիւ իրեն պիտի յանձնուի ընկերային բարձր ի մաստասիրութիւն մը կազմակերպելու ծանր պաշտօնն ալ, խնաստասիրութիւն մը՝ որ եկեղեցւոյ եւ պետութեան առընչութիւնքը պիտի կարգադրէ : Ասի նոր աղբիւր մըն է յուզման՝ անոնց համար, որք ըստ նոր կենաց կ'ապրին, եւ որ չ'են կրնար այլ օրինակ գրութեան մը հետեւիլ :

Ամենայն մասամբ, վատիկանայ ժողովը խիստ ծանրակշիռ դէպք մըն է, որոյ արդասիք մեծ պիտի ըլլան թերեւս քան զամեն նախատեսութիւն : Հարկ չ'է վախճանք դիտնալ՝ անոր ծանրութիւնը չափելու համար . նա մանաւանդ այնպէս կը կարծեմ թէ լաւադոյն է չը դիտնալ,

բոլոր կարեւորութիւնը ըմբռնելու համար : Վերջնական արդիւնքը մոռացութեան մէջ պիտի թաղէ շատ մը սկզբնական դէպքեր, եւ այն ատեն ակնքը պիտի յիշեն աշխատութեան ու վիճաբանութեանց ժամանակը, որ այսօր մտաց ու սրտից խորերը ի վեր կը հանէ եւ ընդդիմախօս վէճերու վտարակայոյց շունչովը առերեւոյթ միութեան մը քօղը կը բանայ : Ներկայն իսկ ուսանելիք լցուն չ'է՞ արդեօք : Անի իրազեկ կրնէ մեզ խառն կացութեան մը, ներքին պառակտումներու որք հասարակ ժամանակաց մէջ դիւրաւ կրնային ծածկըվիլ, այլ որոյ սաստիկ այտայայտութիւնը ժամանակիս յատուկ նշաններէն մէկն է : Ուստի, օգտակար կը սեպենք ուսնիլ ժողովոյն պատրաստութիւնը, կազմակերպութիւնն ու սկզբնաւորութիւնը : կը հաւատեն թէ սրբազան Պապը իր առողջ ծերութեանը մէջ հետեւեալ հանճարեղ խօսքն ըսած է որ այնքան ընտել է իրեն « Տիեզերական ժողովները, ըսեր է, երեք պահ ունին՝ առաջինը սատանայինն է, երկրորդը մարգոց, եւ երրորդը Հոգւոյն Սրբոյ : » Աս մակդիրքը տուեր է առջի երկուքին . զի դեռ լոյս կուտան անոնք պարտադրեալ պատգամաց եւ ոչ բոլորովին կրգողունան ազատ վիճաբանութիւններէն որք, ինչպէս յայտ է, առաջին կարգի բեհեղզերուդի պօրութիւններ են : Հետեւաբար մասնաւոր օգուտ մ'ալ կ'ընծայեն մեզ անոնք : Երբ կրաւորական ներշնչման կամ բացարձակ հլութեան համին, — եթէ հասնիլ հոն պիտին երբէք, — այն ատեն ժողովոյն պատմութիւնը գրելու կը բաւեն առա-

քեւական դպրապետք : Առ այժմ ժողովը դեռ կենդանի է, այսինքն յամեն կողմ կը տարուբերի եւ հաւատարիմ պատկերը կը ներկայացնէ կաթողիկէ եկեղեցւոյ՝ այլազան հակամիտութեանց մասնուած : Կուսուցնէ նաեւ մեզ՝ թէ ի՞նչպէս եկեղեցւոյ այն մասը որ մոլեգնաբար բացարձակ իշխանութեան թեկն կ'ածէ՝ շեշտ իր նպատակին կը գիմէ վասն ամենամեծ թշուառութեան կրօնից եւ արդի ընկերութեան : Եւ զի դեռ իր յաղթանակն ի գլուխ հանած չէ, կարելի է սպաքէն իր միտմունքը հապընդհապ ըմբռնել : Ասի պատեհ մըն է մենիկ զիտնալու թէ ինչ կը խորհի եւ ինչ կը յուսայ :

Ա .

Այնպէս է Տիեզերական ժողովոց համար ինչպէս խօսարանաց (բառլման) . Մի եւ նոյն բառը իրարմէ շատ տարբեր հաստատութիւններ կը բացատրէ ըստ տարբեր ժամանակաց : Բան մը չ'է փոխուած այնչափ՝ որչափ այն մեծ ժողովները, զորոնք անփոփոխելի աւանդութեան պահապաններ ցոյց տալ կ'ուզեն այսօր . ասոնց վրայ կարելի է ճոխ գլուխ մը գրել, եւ յաւելուլ զայն Գօսիւէի ֆոֆօթիսանց պատմութեանը : Մենք կանդառնուլ չ'ենք ուզեր առաջին ժողովոյն վրայ, որ երուսաղեմայ աղքատիկ խուցի մը մէջ տեղի ունեցաւ, որ խիստ քիչ կը նմանէր Սրբոյն Պետրոսի Տիեզերական ժողովոյ սրահին մէջ տեսնուած պատ-

կերին ։ Կ'երեւի թէ նկարիչը մասնաւոր լոյսեր առած է , որով կրցած է վերնատունը փոխել ի ժողովարան կարգինալաց , ընդ նախագահութեամբ կուսին ։ Այս պարագայները որ ի դիր չ'են առնելով կը պակսին որոշյն Ղուկասու պատմութեանը ։ Այլ եւ եկեղեցական պատմագիրք՝ նախնի եկեղեցւոյ ժամանակագրութեան հետ այնպէս վարված են յաճախ՝ ինչպէս նախնի միապետութեան պատմագիրք մեր պատմագրութեանց հետ կը վարուէին , երբ ըզ Ծառամոն՝ Լուի Ժ.Գ. ի պէս թագաւոր մը կը ներկայացնէին ։ Առաքեալք այնպէս են նկարուած իբրեւ նխա ըրած յերուսաղեմ , խոյր ի դլուխ , եկեղեցական վարդապետութեան վերաբերեալ վճիռներ հատանելով արդի քահանայապետաց վճիռներուն նման ։ Ընդհակառակն , ոչ ինչ այնչափ ազատօրէն եւ ինքնաբերաբեր եղած է որչափ երուսաղեմայ զումարումք որոյ անդէպ տուին ժողով անունը ։ Այն ատեն խիստ ծանր խնդիր մը կար ի միջի , հեթանոսութենէ ի քրիստոնէութիւն՝ եւ Հրէութենէ ի քրիստոնէութիւն դարձողներու մէջ հարկ եղած առ ընչութիւնքը պէտք էր սահմանել . այդ երկու տեսակ անձինքն ալ Հրէական արարողութեանց ենթարկելու էր , թէ կարելի՞ էր որ եկեղեցին ազատի բոլորովին սինակոկէն ։ Ունէ՞ր իրաւունք քրիստոնէութիւնը ապրելու ինքնիրեն ։ Այս ճըշմարիտ է թէ երուսաղեմայ եկեղեցին ամբողջ մասնակից եղաւ վիճարանութեան , եւ թէ ոչ ոք իսկապէս նախագահեց ։ Պօղոս , որոյ առաքելութիւնն ընդունուած չ'էր տակաւին , եւ Յակոբ , եղբայրն քրիստոսի , որ առաքեալ չ'էր , այդ գու-

մարման մէջ հզորագոյն ձայն եւ աղբեցութիւնն ունեցան ։ Իմաստութեամբ որոշուեցաւ միջին պայման մը , եւ առ եկեղեցիս զրկուեցաւ յանուն « առաքելոց , առաջնոց եւ եղբարց » ։ Կատարեալ կրօնական ընկերհայտութիւն էր ասի ։

Յաջորդ դարուն մէջ Յիւզեբուական ժողով աեղի չ'ունեցաւ . բ. եւ Գ. դարուց եկեղեցին երբէք հասարակ կեդրոն մը չ'ունէր . չ'ունէր ինչ որ ամեն վարչութեան հոգին է , կեդրոնացումը անձանօթ էր իրեն ։ Պատճառն այն էր որ վարչութեան մը ներհականն էր անի . էապէս ազատ ընկերութիւն մըն էր , որոյ միութիւնը զուտ բարոյական ու գործարանական է ։ Չանաղան եկեղեցիներ կային , եկեղեցի Արեւելից , եկեղեցի Սփրիկէի , եկեղեցի Հռովմայ եւ Գաղղիայ ։ Անձիւր եկեղեցի իր մասնաւոր տիպն , իր յատուկ դիմադժութիւնն , իր առանձին սովորութիւնքն ունէր , թէ եւ ամենքն ալ վարդապետութեան ու կաղմակերպութեան միաբան հիման մը վրայ հաստատուած էին , եւ միահամուռ կը մերժէին ինչ որ քրիստոնէութեան ողւոյն հակառակ էր , զոր օրինակ կնօղը՝ իր բուրբ այլազան ու այլանդակ ձեւերովը ։ Շատ հազարակիցութիւն կար մէջերնին , խորին ու զարմանալի համաձայնութիւն ունէին , սակայն մեծ էր ազատութիւննին ։ Յուստինիանոս մարտիրոսին ու իրէնեայ մէջ եղած վարդապետական տարբերութիւնք ակնբերելի էին ։ Աղէքսանդրիոյ Քլէմասնին ընդարձակօր փոռփոռն հանճարը չ'էր կրնար ի բանտ փակուիլ այն ճշդիկ ձեւերուն մէջ՝ որք հաճելի էին Արեւմտեան եկեղեցւոյն ։ Հերետիկոսութեան դէմ եղած վէճերու մէջ՝ յաճախ ժո-

ղովոց կը դիմէին որ որոշեն . այլ այդ ժողովները տեղական էին , սիւնհոդոսք այլ ա՛յ Տիեզերական ժողովք , եւ ոչ ուրեք անսխալականութեան պահանջ մունքն ունէին : Մնոնց կարի ազատական ոգւոյն ապացոյց մըն է Արարիոյ եկեղեցեաց մէկ սիւնհոդին որոշումը , զՕրիգինէս առաքելու առ թելիւզէս Բոսորացին , որպէս զի համոզէ ըզսա՝ ծանր համարուած վարդապետական սխալի մը վրայ : Այս Օրիգինէսը Ալեքսանդրիոյ եպիսկոպոսէն դատարարուած էր . այլ Արեւելեան եկեղեցիք գրկաբաց ընդունեցին զանի : Պէտք է որ աստուածաբետական բացարձակ իշխանութեան սետաբանք այս վիռուար անցեալը կապտեն ֆրիստոնէական մտածութեան աղատութենէն , եւ կրօնական բռնութեան տեսակ մը կատարելի ազդաբանութիւն յերկրին . անդրանկութեան իրաւունքը ազատութեան կը վերաբերի , աներկբայապէս , եւ Օրիգինէսի սրշածնին արդիւնքը կը յայտնէ թէ վստահութեան արժանի անձ մըն էր անի , զի օրինաւոր վիճաբանութեամբ համոզեց ըզ Բերիւզէս : Ո՛չ նուազ յաջողեցաւ Օրիգինէս ուրիշ բանակցութեանց մէջ՝ ուր համոզեց զայլ հերետիկոսս , որոց դէմ զրկուեցաւ նոյն եկեղեցեաց սիւնհոդին հրամանաւ : « Այնչափ աղբու վիճաբանեց , կ'ընէ Եւսիբիոս , մինչեւ պարտաւորեց զընդվիզեալ իրենց մարդու մն ուրանալ » : Չը մտնանք թէ այս սիւնհոդներուն մէջ բազմոյ պիսկոպոսունք իրենց եկեղեցւոյն ժողովրդեանը ձայնով ընտրուած էին , եւ միապետական իշխանութեան մը կամօքն հաւաքուած ծերակոյտի մը չ'էր նմաներ երբէք :

7. դարէն կը սկսին ընդհանուր ժողովները , որոնք համայն ֆրիստոնէութեան ներկայացուցիչներն ըլլալ կը յաւանին : Այս մեծ կերպարանութիւնը տր կրօնից՝ կայսրութեան հետ միանալուն առաջին արդարեայ մէկն է : Կատարելականս շատ դայթակղեցաւ . դեկեղեցին պատակասղ կուխներէն : Կ'ուղէր դեկեղեցին ճշտացնելու նը պատտել անոր , բոց այն պայմանաւ՝ որ եկեղեցւոյ վարչութիւնը կայսրութեան ուրիշ վարչութիւններէն ամենեւ աւելի տաղնապեցուցիչ ըլլայ , եւ զայն դեղեցիկ կարգաւորութիւնն ու անբոսերիւր դասակարգութիւնը ներկայացնէ որ հապիւնական ոգւոյն երեւակայած նպատակն եզան միշտ : Նիկիոյ ժողովը գումարուեցաւ՝ Արիտակառութեան յարուցած մրկալից կուխներուն վերջ տալու համար : Այս ժողովը կայսեր ծախիւքը արնտեսեցաւ իր պալատին մէջ , եւ այն առաջին անգամ ֆրիստոնեայ Արեւելքու Արեւմուտք դէմ առ դէմ եկան : Յայտնի է թէ ի՛նչ վախճան ունեցաւ այս առաջին ընդհանուր ժողովն : Արիտականութիւնը դատարարուեցաւ , այլ չը յաղթուեցաւ . զի մեծագոյն մասին հարուածին ապի ընկեցաւ , դրդմամբ հղօր « եպիսկոպոսին դըրսի » , ինչպէս կըսէին այն ատեն կայսեր : Կաեւ , առաջին Տիեզերական ժողովոյ մէջ յաղթանակող ձեւը խիտ անձուկէ ֆրիստոնէական բնազանցութեան համար , որ աւելի ազատութեան իրաւունք ունի , ինչպէս որ Գալիին դարուց պատմութիւնը կապացուցնէ : Ո՛չ որուազ տխրութեամբ կը տեսնէ մարդ որ՝ եկեղեցւոյ

1395
3

ներկայացուցիչք՝ որոնցմէ շատերը յանձինն կը կրէին հալածանաց դրոշմը, յակճիւս կը մնային կոստանդիանոսի, այն զարմանալի նորհաւատին՝ ճառերուն առջին եւ գոգցես հաւատքի կուգային: Եթէ կոստանդիանոս ուզիչ հաւատ ունէր՝ չ'ունէր դործ, զի հազիւ արտասանած իր ճառը, կամ թէ ըսեմ ժողովոյն հրածեչով քարոզը՝ այդ հաւատացեալը ամենէն աւելի անգութ կայսերաց հետ կը մրցէր, կ'ինն ու որդին ի մահ մատնելով: Նիկիոյ ժողովը Էապէս կայսերական ժողով եղաւ եւ կամ գէթ Հռովմայ եպիսկոպոսին ազդեցութենէն բոլորովին անկախ:

Երկրորդ Տիեզերական Ժողովը (1) 381 ին

(1) Բարիգու կայսերական գրքատունը անդին ձեռագիր մը կայ Գրիգոր Նազիանզացոյ ճառերու, Վասիլ Մակեդոնացի կայսեր համար օրինակուած (867—886) այս ձեռագիրը շատ մը մանրանկարներ ունի արոնց նիւթերն անուուած են հին եւ նոր կոտակարանայ եւ եկեղեցոյ ե սուրբերուն պատմութիւններէն:

Այս նկարներուն էն երեւելին եւ հետաքրքրականը երկրորդ Տիեզերական Ժողովը կը ներկայացնէ 'ի Կ. Պօլիս (381 որուն մասնակից էր Գրիգոր Նազիանզացին) — Եպիսկոպոսաց աթոռները կէս լուսին մը կը ձեւացրմեն Գահին չորս կողմը որուն ձախ կողմը նստած է ենձն թէ ողոս:

Առաջին կարգին մէջ ձախ կողմը Մակեդոն եպիսկոպոսը եւ աջ կողմը նստած է Ապոլոնիոս, ասոր միայն անունը մնացած է՝ կերպարանքը պատուած ըլլալով, ասոնց ջերկութիւն մէջ սեղանի մը վրայ իրենց դրութիւնն ուր կան որք դատապարտուեցան ժողովրէն:

Գահին վրայ, որ ժողովրէն մէջ տեղն է՝ դրուած մարդ չ'իկայ այլ ծիրանի մը ծածկուած եւ վրան քայ

գումարուեցաւ ի Բիւզանդիոն, եւ ժանր որոշում մը ստանձնեց՝ Հողւոյն Սրբոյ վարդապետութիւնը յարելով Նիկիոյ հանգանակին: Հռովմայ եկեղեցին ներկայացուցիչ անդամ չ'ունէր հոն, եւ եղած որոշումնքը պարզապէս անոր կը հաղորդուէր՝ ինչպէս եւ ուրիշ եկեղեցեաց: Եթէ ճշմարիտ է որ Հռովմայ եպիսկոպոսին ազդեցութիւնը ամեն քաղաքական իշխանութեանց աւերակացը վրայ զորացաւ՝ Արեւմտեան կայսրութիւնը կործանող սոսկալի խռովութեանց մէջ, սա՛ ալ ոչ նուազ ճշմարիտ է՝ որ Հռովմայ եպիսկոպոսին որոշմանց եւ ոչ մին ընդունուած է՝ փոխանակ տիեզերական ժողովոյ մը վճիռներուն, կամ թէ այնպէս

գիրք մը Սուրբ Գիրք վրան դրուած յայտնելու համար թէ նա միայն կրնար ժողովրէն նախագահել եւ թէ նա միայն էր գերագոյն դատաւոր խնդրոց տարածայութեան մէջ:

Պատկերհանը լսան մը մտքէն հարած չըլլալը յայտնելու համար՝ Վիւրեղ Ազգասնդրացոյն վկայութիւնը կը բերենք հոս՝ որ Նիկեոսի 431 ին ժողովրէն վրայ խօսելով այնպէս կը զրուցէ: — « Ս. Ժողովը Մարիամու եկեղեցին ժողովեցաւ: Նախադահութիւնը իրեն՝ Քրիստոսի տրուեցաւ, որովհետեւ Աստուծոյ Աւետարանը դահին վրայ դրուեցաւ եւ իբրեւ թէ Ս. Ժողովրէն անդամոց կը զրուցէր՝ արդար եղէք ձեր դատաստանաց մէջ » . . . :

Կաթողիկէ եկեղեցոյն առջի ժամանակները այս կերպով կը վարուէին, եւ մեր օրերուն ալ Հայր Եսասենթը (Յակենթոս) լսեցինք որ առ Յիսուս Քրիստոս կը բողոքէր:

(Սեռքենէսի Կաղթիէն անուուած Գուսիէ ո'Օրիանս 28 վեպրվար 1870 .)

որ այն որոշումը անհերքելի իշխանութեան մը կնի-
քը կրէր: Առաջին երեք դարուց ընդհանուր ժո-
ղովները վարդապետական ու դասակարգութեան
նիւթոյ մէջ գիբեանք իբրեւ վեհապետ իշխանու-
թիւն կը համարէին, եւ ըստ այսմ կը վարուէին: Ե-
նայն իսկ երբ Հռովմայ Պապը (Ղի Աղեքսանդրիա իրն
ունէր, որ նոյն անունը կը կրէր) եկեղեցւոյ ընդ-
հանուր զգացման համաձայն ըլլար, եւ ուղիղ
կերպով դայն բացատրէր Քրիստոնէութիւնը դար-
ձեալ իր նիստերը կ'ընէր, եւ խնդիրը նորէն վի-
ճարանութեան դնելով՝ վերջնական որոշու մը կու-
տար: Սոյն տեղի ունեցաւ Եփեսոսի տիեզերական
Ժողովոյն մէջ (431) երբ Նեստորիոս իր աղանդին
վէճք բացաւ՝ Կեղեասինոս Պապին դատապարտու-
թեան հակառակ: Քաղեզոնի Ժողովը (449)
պարտաւորեցաւ հաստատել մեծին լէոնի թուղ-
թը, որ Եւաիքէսի հակառակութեանն պոթիւ
դրուած էր, եւ Պապն իսկ ծանոյց թէ պէտք ու-
նէր ժողովոյն այդ հաստատութեանն: Եկեղեցւոյ
նախնի իրաւանց նկատողութեամբ միայն այս դէպ-
քերը մէջ կը բերենք, առանց նոյն ինքն վարդա-
պետութեանց յարելու: Նախնական քրիստոնէու-
թիւնը զարմանալի կերպով բեռնաւորած էր խիստ
նրբին բնադանցութեամբ մը: Կիպոսն՝ իրաւամբ ը-
սաւ թէ այս վարդապետական տաղնապը, որ ե-
կեղեցւոյն կըսպառնար՝ յաւիտենական դատապար-
տութեան երկիւղով, շատ կը նմանէր այն ածելիի մը
սայրին չափ նեղ կամուրջին՝ որ, ըստ պարսիկ դի-
ցարանութեան հոգիներն յարքայութիւն կը աանի:
Սակայն եւ այնպէս, պապն անոր բանալ ինները չ'ու-
նէր եւ չէր հաստատած տակաւին զիրաւունս վճար-

ման, որ այնչափ սուղի պիտի գար եկեղեցւոյ ա-
դատութեանց: Ինք ալ կը ճանչէ թէ անձեռնհաս է
վարդապետական որոշումնք տալ առանձինն: Սի-
րիկիոս պապը (384—398) եպիսկոպոսի մը հերետի-
կոսութիւնը դատապարտել չ'ուզէր դաւառական
եպիսկոպոսաց դատաստանին սպասելու պարտա-
ւոր եմ, ըսաւ: Եթէ Հռովմայ Պապը, այս իմաս-
տուն խոհեմութիւնը մոռնալով, վիճաբանութեան
տակ ելած դադախարաց վրայ շտապով դատաս-
տան մ'ընէր, եւ Քրիստոնէութեան ընդհանուր
զգացման թարգմաններն ըլլող մեծ վարդապե-
տաց դիմադրէր՝ խստիւ կը յանդիմանուէր, ինչ-
պէս Սոսիմ պապը յանդիմանուեցաւ Սիլիկիէի ե-
պիսկոպոսներէն՝ Կէս—պեղադիանութեան օգնե-
լուն համար: Վիզիլ պապը՝ կոստանդնուպօլսոյ
երկրորդ ժողովին ասան (551) եկեղեցւոյ հա-
ղորդակցութեանն իսկ արտաքսեցաւ՝ Ժամանակին
հակաճառութեանց նկատմամբ դեղ եւ ելուն համար:
Պապը խոնարհիլ ստիպուեցաւ՝ հռչակելով թէ
խաւարային ողիներու թեղադրութեանցը խա-
բուեր էր: Հօնօրիոս պապին դործը հանրածանօթ
է, եւ այսօր իսկ այնչափ աղմուկ կը հանէ որչափ
է. դարուն մէջ: Յայտ է թէ Բեռլինի հերե-
տիկոսութիւնն ընդունած էր, որով Մարդ—Աստու-
ծոյն վրայ մէկ կամք միայն կը դաւանէր: Ենյն
պէս յայտ է թէ 681 ին ալ կոստանդնուպօլսոյ
տիեզերական ժողովէն դատապարտուեցաւ, եւ
իր գրուածներն ի հուր մատնեցան: Մտքաբեռ-
նեայք այս դատապարտութեան հրովարտակին
ստուղութիւնն ի դուր ուրանալ ճգնելէ յետոյ, կը-
ջանան այժմ համոզել թէ Հօնօրիոսի միտքը լա-

մը չէր հասկցուած : Հռովմէական կղերը խոյս
կ'ուտայ այս դժուարութենէն . ալօթագիրքը մեծ
ճարտարութեամբ ձեռքէ կ'անցունէ : Լէոն Բ . պա-
պին ժամադրքին մէջ՝ իր քահանայապետութեանն
ատեն դատապարտուած հերետիկոսաց շարքին
մէջ Հօնօրիոսի անունն ալ կ'երեւէր , այս անունն
աւրեցին , եւ պատճէնն աղճատեցին համար-
համար , ինչպէս կրսէ հայր կառնիէ : Այս համեստ
ասացուածը խոստովանութիւն մ'է : Սակայն , այ-
սու ամենայնիւ , Է . դարուն մէջ պայ մը եկեղեց-
ւոյ դատաստանէն վեր չէր համարուեր երբէք ,
եւ միահեծան իշխանութիւնը , ֆրիստոնէութեան
այն մեծ վճռաջինջ ատենը , Հռովմայ մէջ չ'էր
հատաստուած : Արեւմուտք իսկ կը միանար Արե-
ւելից՝ եկեղեցւոյ իրաւունքը պահպանելու հա-
մար , զի կը տեսնենք որ 774 ին՝ Գրանքֆօուայ
մեծ ժողովը մերժեց զպաշտօն պատկերաց , զոր
Ադրիանոս Ա . Պապը կ'ուզէր հաստատել Արեւել-
եան ժողովոյ մը որոշմանց յետով :

Այս ատենէն սկսեալ՝ ամենայն ինչ կը փոխուի :
Հոս աւերորդ է ցուցնել պապական իշխանութեան
աճումն ու փառասէր փափաքը՝ տիեղերական մի-
սպետութիւն մը յարուցանելու , տեսակ մը Հռով-
մէակիօն կետարութիւն՝ որ կայսերական սուրը ե-
կեղեցւոյ կամ մանաւանդ անոր բացարձակ պե-
տին ծառայեցնէ : Այս երազը մարմնաւորելու
համար՝ Յ. Եւ Յ. Դարուց մէջ Հռովմ' անչափ
հանճար , անչափ հաստատ ու յամառ կամք , ան-
չափ քաղաքական ճարտարութիւն ցոյց տուաւ՝
որչափ հինն Հռովմ' : Ունէր նա իր զօրութեամբը ,
լէգէաններ՝ միջին դարու վախճան մեծ կար-

դերուն մէջ : Նոր Հռովմայ քաղաքակրթութեան
մատուցած սպաններն առանց ուրանալու՝ ընդու-
նելի է որ նա հին Հռովմայ անսահման ու տա-
րապայման փառասիրութեան ասպարէզին մէջ
ընթանալ չ'երկմտեցաւ : Ասոր ի վկայութիւն կը կո-
չենք Յանոս այն հօշակաւոր մատենար , որ հե-
րետիկոս աղբւրքէ մը չը բղխիւր . յայտ է թէ այդ
գործը կը վերաբերի Գերմանացի Հռովմէադաւա-
նաց այն գիտան մասին՝ որ դուցէ սահմանուած
է փրկել զեկեղեցին այն վերջին սարկութիւննե-
րէն : Այդ գործին մէջ կը տեսուին աներեւո՝ Պա-
պական իշխանութեան յափշտակութիւնք , անոր
համար այլ ապահով յառաջդիմութիւնք , եւ փո-
փոխ առիթներէ օգուտ քաղելու այն զարմանա-
լի արուեստը , որով մարթ ըլլար իրակայնել յա-
տակադիմ մը՝ այնչափ անփոփոխ իր նպատակին
մէջ՝ որչափ նըբին գործածուած միջոցներուն մէջ :
Կը տեսուի նաեւ թէ ինչպէս Հռովմայ եկեղեցին
յարբուսիս Հռովմայ կը փոխուի անոգայապէս ,
թէ ինչպէս Հռովմէական կղերնն զիրօն իր քաղա-
քային նպատակաց գործածեց . կրօնական ուս-
մանց անօգուտ բերը թօթախեց ի մտաց՝ ինքզինք
բողոքով յանձնելու համար Կ . Ե . Ե . Ե . Ե . Ե . Ե . Ե .
որ իւր նշանաբանն է , ինչպէս նշանաբանն էր այն
գոռ աշխարհակալաց՝ որոց զտեղին ունի այժմ :
— Ե . դարուն վերջերը , Ոգածոն Պապը Յունաց
կը խոստովանէր՝ թէ Ս . Գրոց խորին ծանօթու-
թիւն մը չը կրնար գտուիլ Հռովմէական կղերին
մէջ , « գի , կ'ըսէր , իր ձեռաց վաստակովն ապ-
րելու ստիպուած՝ ուրիշ բան չը կրնար ընել՝ եթէ
ոչ հին ժողովոց արանգութիւնը պահպանել պար-

զամտութեամբ : » Այժմ պիտի տեսնենք թէ ի՞նչ է այս պարզամտութիւնը, որ արդարեւ մեծ ճիգեր կը պահանջէր, տաժանելի վատտակ, ոգեպահիչ հացէն աւելի լաւագոյն վարկի մը արժանի, զոր կրէրն ստայաւ եկեղեցական գերադահութեամբ, որով փառաց ու ճոխութեան նոր արբիւր դտաւ : Կրօնական ամեն խնդրոց մէջ իր միջամտութիւնն օրինաւոր հռչակելով, իր ատենին դիմողները բազմապատկելով ամեն եպիսկոպոսական անուանակոչութեանց ու ամեն խռովութեանց մէջ ինքզինքը հարկաւոր ցոյց տալով, ստուղիւ իր բեմին սահմաններն ընդլայնեց ցրծագոյն աշխարհի, հոգեւոր իշխանութիւնը սուրի մը փոխեց՝ որոյ սայրն ամեն տեղ ու երախտական իր ձեռաց մէջ է : Ահա հոս կ'արտայայտի այն զարմանալի պարզամտութիւնը՝ զոր կը գովէր Աղաթոն Պապն՝ աւանդութեանց պահպանութեան մասին . այս պարզամտութիւնը միացած էր սակայն վերջին աստիճան նրբամիտ մեկնաբանութեան : Տանդէ սկսել էր գանգատել թէ Հռովմայ մէջ այնչափ շատ օրէնագէտ կար որչափ Աստուածաբան : Միապետական կրօնամտութիւնը չ'էր կրցած գանել ճարտար դպիրներ, որք կարենային ճարել պէտք եղած փաստերը : Արդարեւ միջին դարու մէջ Պապական գերիշխանութեան փաստաբանք այս միջոցն ունէին . իրենց հին թղթեանը կը ճոխացնեն այնպիսի յիշատակարանք՝ որ ի գիր չ'են առուած մինչեւ իրենց օրը, եւ զոր կը պճնեն ըստ քմաց իւրեանց :

Առաջինը եւ ամենէն անուանին այս խարդախ գործութեանց խիպորոսի ընծայեալն է, որ կէօ Կէօ անունով ճաշուած է : Շատ տարօրինակ է ասոր

ճաղումը Հրէնոսի ձախ ավանց ֆրանկ երկիրներու քանի մը եպիսկոպոսաց գործն է այս որք իրենց մետրապօլիտին լուծէն ազատելու համար՝ Պապին իշխանութիւնը բարձրացնել ուղեցին, ինչպէս երբեմն հասարակ ժողովուրդը թագաւորութեան պաւլինեցաւ ընդդէմ աւատականութեան, Այս բարի եպիսկոպոսունք ամենէն ծանր ստախօսութիւններ զանց չ'ըրին, եւ տիեզերական ժողովոյ հրովարտակներ կեղծելով հրատարակեցին որք առիւծք բաժին կը հանէին պապութեան . Նիկիոյս Ա. Պապն այդ դիւտին վրայ հիացաւ, եւ օգուտ քաղեց անկէ, բայց մանաւանդ Գրիգոր Է. Պապը մեծ օգուտ քաղեց՝ կայսերութեան դէմ ըրած ահեղ մարտին մէջ : Այն կէս բարբարոս եպիսկոպոսաց տձեւ հաւաքածոյն ուղղել տուաւ իւր օրէնքս գէտներուն . դատովճիւղք գեղեցիկ կարգի մէջ դըրվեցան՝ որով պապութեան թանկագին ըսպասներ կրցան հարկանել : Անսէլմ լուքքացին, Ալէքսանդր Բ. Պապին հեղօրորդին, դատավճիռները մեծ ճարտարութեամբ կարդաղբեց, եւ արժանի է կոչուիլ հիմնադիր Գրիգորեան իրաւանց : Աստուածատուր կարգինալը, նոյնպէս Գրիգոր Է. ին նուիրեալ, այդ գործն ՚ի վերջին ծայր կատարելութեան հասուց . ինք հնարեց այն հանգիստ ըսկըբունքը թէ իր հաւաքած թղթեանին մէջ գտնուած հակասութիւններն ուշադրութեան առնելու չէ երբէք, եւ այս՝ այն սկսեամբ ընտեսնեալս իշխանութեան ամենէն մեծին պարտի մեծին մեծին պարտի պէս պաւ : Ասկէ կը հետեւի որ հին եկեղեցոյ ազատական աւանդութիւնքն քահանայապետաց յախշտակութեանցն առջեւ անդօր կը մնային, անոր համար

միայն՝ որ այդ աւանդութիւնք՝ զազատութիւն նախապատիւ սեպեցին քան զիշխանութիւն . եւ այն ատեն այս վերջինը՝ կ'ըլլայ իբր անեղծանելի նշան ճշմարտութեան, որոյ առջեւ անզի տալու է ամեն ինչ :

Յաջորդ դարուց մէջ՝ այն օգտաւէտ խարդախութեանց թիւը բազմապատկեցաւ, մինչեւ որ 1150 ին՝ Պօլսնի իրաւաբանութեան դպրոցը զանոնք կատարեալ ցուցակի մը մէջ առնելով հրատարակեց եւ այնպէս իրաւաբանական ճարտարութեան նորոգեալ կերպարանք մը արուած էր որ լաւագոյն դատի մ'արժանի են . կրօնական բրնձնաւորութեան դէնքերը յղկեցան ու սրեցան՝ որպէս զի ազադային մէջ կարենան ծառայել Հոովմայ արքունեաց պէտքերուն : Հոս բաւ է քանի մ'օրինակներ տալ այս իրաւաբանութեան, որ կղերին յաւակնութիւնքը պաշտպանելու նախասահմանուած էր, եւ որ Հոովմէադաւան եկեղեցւոյ վիճակին վրայ աւելի մեծ ազդեցութիւն ունեցաւ՝ քան չունեցան հարք համօրէն : Ինակա նաբար սուտ դատաւիճիւններ շատ կան այդ օրինակաց մէջ, այդ մեծ ժողովոց կարծեցեալ կանոնաց մէջ, սկսեալ ի ժողովոյ Նիկիոյ, որ իբր թէ վճռած ըլլար թէ առանց Պապին հրամանին անկարելի ժողով դումարուիլ : Կոստանդինուսի ծածուկ պարզեւն, զիստալիա սուրբ հօր կը թողուր, խնամով ձեռք բերուիլ կ'աշխատուի ահա : Նիկիո զոս Բ . արգէն խիստ գեղեցիկ գործ մ'ըրած էր Քաղկեդոնի ժողովոյն մէկ հրովարտակը փոփոխելով, որ կոչման իրաւունքը առաջին ընտրուին, այսինքն Արեւելեան պատրիարքաց կուտար . Պապը

Ընտրել ընտրի փոխեց, եւ չնչին փոփոխութեամբ՝ իր գերադահութիւնը կրցաւ քանի մը դար առաջ սկըսուած ցուցնել : Կոանդիէն աւելի կոկիկ գործ տեսաւ : Սիբիլիէի հին եկեղեցին հրովարտակ մը հանած էր, որ Պապութեան յաւակմանցը կ'ընդդիմանար . անդրածովային, այսինքն ի Հոովմ երոյ կոչումները կ'արգելէր : Կոանդիէն զայն ձեռքէ անցունելու, սրբադերելու նեղութիւնը չուզեց կրել . ուստի կարթագինէի կանոնին տրամադրութիւնքն ի հակառակ փոխեց, եւ ինչ որ արգելեալն էր՝ հրամայեալ եղաւ : Անբրկմիտ կը հըռչակէր թէ եկեղեցւոյ առաջին պարսն է արգելիչ միջոյններով ստիպել զմարդիկ ի բարութիւն եւ ի հաւատ : « Պապը, կ'ըսէ, եկեղեցւոյ ամէն օրէնքներէն վեր է . ուղածին պէս զանոնք կրնայ գործածել . օրինաց ոյժ կուտայ անի : » Ահա այս գիրքն է որ՝ միջին դարուն մէջ՝ Հոովմայ արքունեաց ջանիւք՝ քրիստոնեաց Արեւմտեայ օրինաբերքն եղած էր : Սուրբ Թովմայ այդ կ'ըրքէն քաղեց՝ սուրբ աթուոյն գերադահութեան ու հեղինակութեան փաստը : Այս գրքէն օգուտ քաղեց՝ իբր թէ հին Յունական եկեղեցւոյ մէկ կարծեալ յիշատակադրութեանէն մնացած ըլլար, զոր լատին աստուածաբան մը յօրինեց Ե . դարուն մէջ, եւ որպէս զի զԱրեւելեայ Պապական տեսութեանց համոզէ՝ յիշեալ աստուածաբանը ուղածին պէս խօսեցնել կուտայ Ռսկեբերանը ու կիւրեղըն : Նախնի հինգ դարուց էն հոյակապ հարց բերանը զնեւ կը յանդդնի այսպիսի ենթադրութիւններ . « Յաւուս քրիստոս իր ամենակարողութիւնը Պետրոսի յանձնեց, հետեւաբար Պապը միայն իրաւ

ուռնք ունի կապելու եւ արձակելու : Գրիստոս ա-
մեն Պապին հետ է : Ժողով մը քահանայապետէն
միայն իր հեղինակութիւնը կրնայ ստանալ : » Ս .
Թովմաս իմ Սօճին մէջ դրաւ այս սկզբունքը , եւ
Հռովմայ աջաց առջեւ հրեշտակ որոշեց տնտեսին
կարի արժանացաւ : Պապին անխաղաղանութիւնը
պաշտպանողներուն լաւ է ցուցնել իրենց այդ ա-
ղանդին աղգարանութիւնը : Պ . Մաննինկ , առ-
իւր կրեբն ուղղած հովուական թուղթին մէջ ,
կը յուսացնէ՝ թէ ժողովը վերջ պիտի տայ այն
անիծեալ պատմական քննադատութեան՝ որ նո-
րանոր աւարկութիւններ կը գտնէ միշտ , եւ թէ
աւանդական հաւատոյ եղբնակին հաւանութիւն
պիտի տայ : Իրաւունք ունի . զի ժողովը բան մ'ը-
րած չը պիտի ըլլայ՝ եթէ չը բանադրէ զպատ-
մութիւն , որ , բոտ անդրալեռնեայց , անուղղակի
հերետիկոսութիւն մըն է :

Գանք ժողովոց քննութեանը : Մենք չը շեղե-
ցանք մեր ճամբէն . զի մեր յիշած խորհախո-
թիւնք շատ մեծ մաս մ'ունեցան՝ մանաւանդ
յԱրեւմուտս գումարուած ժողովոց մէջ : Ոչ-
ինչ աւելի անհեթեթ է քան է . դարէն եւ այսր
Հռովմայ մէջ գումարուած ժողովք , որք ուրիշ
բան չէին ընեը՝ բայց եթէ վաւերացնել սուրբ ա-
թուոյն բռնաբարութիւնքը , յոյժէ բացարձակա-
պէս կախում ունէին , իւր որոյ հրամանին համե-
մատ քուէ կուտային , 1123 ի , 1139 ի եւ 1179 ի
ժողովք՝ լեղուի՝ այլանդակ եղծման մը շնորհիւ մի-
այն աիեղերական կոչուեցան : Առաջին ժողովոյն
մէջ՝ 600 արքայ կը գտնուէին փոխանակ 300 ե-
պիսկոպոսաց : Վիճաքանութեան երեւոյթն իսկ չը

կար . երբ Պապը խօսէր՝ ամենքն ալ դուրս կը շար-
ժէին ի նշան հաւանութեան : Երեք նիստէ յետոյ՝
գործը Լադուանայ երրորդ սիւնհողին յանձնե-
ցին , որ Պապին ժողովը կոչուելու արժանացաւ :
Լադուանայ չորրորդ սիւնհողը 1215 ին գումար-
ուեցաւ՝ իննովկենտիս Գ . Պապին հրաւիրելովը :
Ս . յս ժողովը աւելի բազմաթիւ՝ այլ ո՛չ նուազ հնա-
ղանդ անդամներ ունեցաւ . Պապն իր պատրաստած
հրովարտակները կարգաց հարց , եւ յետոյ Թէ Տէրը
երդեցին : Լիօնի ժողովը 1146 ին գումարուեցաւ՝
Ֆրեյտերիք Բ . ը՝ թագադուրկ հռչակելու համար ,
Պապը խնամ տարած էր որ Գերմանացի եպիսկո-
պոսք ներկայ չը գտնուէին ժողովին : Վիէննայի
սիւնհողին մէջ (1311) , Գլէման Ե . տաճարակա-
նայ դատապարտութիւնը քարոզեց , եւ գործը
պարզելու համար՝ քահանայի մը ձեռք ծանոց
թէ՝ եպիսկոպոս մը , որ առանց իր հրամանին բառ-
մ'արտասանէ , հաղորդակցութեան գուրս պիտի
ձգուի : Ահա այս վիճակին հասած էին քրիստո-
նէութեան ներկայացուցիչք , կղերին նախաչա-
ղին շնորհիւ , 1512 ին ժիւլ Բ . Պապը , Լադուա-
նայ ժողովոյն պարապ ժամերուն գործ ճարելու
համար , երրորդ նիստին մէջ՝ խորհուրդ կը հար-
ցընէ թէ լաւագոյն չէ՞ Լիօնի տօնալաճառն ի կը-
ռնծալ փոխադրել : Ճշմարիտ է որ՝ ասոր ի վար-
ձատրութիւն՝ Պապը ժողովոյն ընդունել տուաւ ու
հրատարակեց ըղ Բասթու Եօրէանէս , որ ժողովոց
վրայ կատարեալ հեղինակութիւն ու անսահման
իշխանութիւն կուտար իրեն , անցելոյն պատմա-
կան վաճախարակութեանց յետով : Լադուա-
նայ ժողովներն իրենց սեռին մէջ կրնան օրինակ

ընծայուիլ, եւ կրնան հեշտ նախաշաւիղներ հայ-
 թայթել այն իշխանութեանց՝ որք ձեւի համար
 միայն հրաւիրուած քննիչ ժողովոց հետ ուղած-
 նուն պէս կ'ուզեն վարուիլ: Ինչպէս Յանոս կ'ըսէ:
 Պապութիւնն զՀռովմէական ժողովքները իր բըռ-
 նակալութեան յառաջապահներն բրած էր:

Սակայն եկեղեցին առանց դիմադրութեան
 չ'էր ընդունած այսպիսի նոր ու նուաստ լուծ մը:
 Գաղղիայ դէմ կեցաւ յանուն հնադոյն ու յարգե-
 թի աւանդութեանց քրիստոնէութեան: Ս. Եսայի
 եւ իմաստուն ընդդիմութեան հողին՝ Բարիդի ու-
 սումնարանն եղած էր: Յաւալի է սակայն որ այդ
 ուսումնարանին՝ թագաւորութեան այդ շաւի ծառա-
 յութիւն մատուցանելը, այլ երկու իշխանութեանց
 անշատման վրայ մերութեցած արդի ծանօթութիւն-
 ներն ապաժամէ պահանջել անկէ: Նտեւ, դաղա-
 փարաց շարժում մը յղացաւ, որք յայն ուղի պիտի
 առաջնորդէին. ուսումնարանը ուղի դաւաճուն մէջ
 առաջին քայլ մ'ըրած էր արդէն՝ Պապութեան
 քաղաքական գործոց մէջ միջամտութեանը դէմ
 կենալով: Գաղղիական եկեղեցւոյ ազատութիւնը
 դէթ արգելք կը յարուցնէին՝ Պապին փորձած կեդ-
 ըրնացման առջեւ, եւ վարդապետական հեղինա-
 կութիւնը ամբողջ մարմնոյն մէջ կը կաղուցնէին՝
 եւ ոչ միայն գլխաւորին մէջ: Յայտնի է թէ, պա-
 ռակտեալ Պապութեան մը նուաստութեանն ու
 ակարութեանը շնորհիւ, Գաղղիական եկեղեցին՝
 Արեւմտեան մեծ հերձուածին սասն՝ կրցաւ իր
 սկզբունքը պաշտպանել ու յաղթող կաղուցանել
 զայն՝ ֆոնտանայ ժողովին մէջ: Ժան Հիւսայ
 դատապարտութիւնն զմեզ պէտք չ'է զայրացնել

ժողովոյն դէմ, որ արդարեւ եկեղեցւոյ ներկայա-
 ցուցին էր: Ժէուսօն, Բարիդի ուսումնարանին
 քարտուղարը, ներշնչեց զայն հրովարտակս չոր-
 րորդ ու հինգերորդ նիստերուն, որք սխալա-
 կան Պապին վրայ ժողովոց ունեցած գերազուանու-
 թիւնը կը պաշտպանէին որոշ ու հզոր փաստերով:
 «Ամեն տիեզերական ժողով, կ'ըսէին ֆոնտանայ
 հարք, երբ կանոնաւորապէս դումարուած զե-
 կեղեցին կը ներկայացնէ, անմիջապէս ֆրիստոսէ
 կ'առնէ իր եկեղեցականութիւնը: Ամեն մարդ,
 Պապն իսկ, ի մասին հաւատոյ ենթարկեալ է ա-
 նոր: Ս. Ես հրովարտակները, զոր Պօլսոյ ժողովը
 հաստատեց՝ թէ եւ Հռովմէական նենդութեանց
 պատճառաւ չը կրցաւ իր աշխատութիւնն ի գլուխ
 հանել, մերժուեցան ի շնորհս խարդախութեան»
 մը զոր Պապին դպիրներն Յլորանայի ժողո-
 վոյն մէջ, որ դումարուած կը կարծուէր Յունա-
 կան եկեղեցին Արեւմտեան եկեղեցւոյն հետ միա-
 ցընելու, այլ սրոյ բուն նպատակն էր ամբայնել
 ֆրիստոնէութեան շղթայները, որք պահ մը թու-
 ցած էին. Յունաց հետ առ երեսու միայն խաղա-
 դութեան թաշն դրին. դիշատ ակարացած կայս-
 րութիւն մըն էր, որ օգնութիւն կը հայցէր ամե-
 նուրեք: Սակայն Հռովմէական կղերը շատ օգուտ
 քաղեց այս ժողովն՝ իր յաւակնութեանց նկատ-
 մաբմ: Յլորանայ ժողովին գլխաւոր հրովարտա-
 կը, շատ երկդիմի էր: «Պապը կ'ըսէր այդ հրովար-
 տակը, ֆրիստոսի փոխանորդն էր գլուխ համայն
 եկեղեցւոյ, հայր եւ վարդապետ ամենայն քրիստո-
 նէից. ի ֆրիստոսէ ունի նա զիշխանութիւն կա-
 ռավարելոյ եւ պահպանելոյ զեկեղեցին»

դրոցաց կուտան տիեզերական ժողովք ու կանոնք : » Յոյնք կը կարծէին թէ այս վերջին բառերով Հռովմայ եպիսկոպոսին իշխանութիւնը սեղմըլած էր ըստ բաւականի . կը կարծէին թէ նախնի դարուց տիեզերական մեծ ժողովոց պիտի դիմվէր , մինչ Լատինք իրենց օրէնագիտաց միջոցաւ աղաւաղեալ ժողովներն ու Լազոսանայ սինհոդները կ'իմանային : Սակայն Հռովմ դո՛հ չեղաւ այս երկդիմի իմաստովն . թարգմանութեանը մէջ երբք գիր ալ աւելցուց Յլօրանայ հրովարտակի բնագրին : Այս բնագրին մէջ գրուած էր . Պապը զիշխանութիւնն ընդունած է՝ ժողովոց ցոյց տուած եղանակս : Հռովմայ մէջ այսպէս թարգմանեցին . զիշխանութիւնն ընդունած է , եւ ժողովք այսպէս ցոյց կուտան , — Գոսեմարմարմոս երբեմ թարգմանեցին՝ փոխանակ Գոսեմարմարմոս երբեմ թարգմանելու : — Էրբ ի տեղ Էրբեմ բան մը չ'է , այլ ամեն բան է . վերջին ծայրն է նենդութեան :

Եթէ մէկ կողմէն վերանորոգումը էրոպիոյ մէկ մասը սուրբ աթոռէն խլեց , միւս կողմէն փութացուցուց կեդրոնացման շարժումը՝ որ կրօնական պատերազմին ազդած հարկաւորութեանց միջոցաւ Պապին հեղինակութիւնը կ'աճեցնէր : Յիսուսեանք Պապին եկեղեցիներն էին , եւ ասոնցմէ ո՛չ նուազ բուն պաշտպաններ : Մինչեւ վերջը կը պաշտպանէին զանի՝ այլ ինքզինքնին անոր պատկառելի ընելով , զանի՝ ստիպելով՝ որպէս զի իրենց հեղինակութեան գրութեանը ծառայէ : Պապն իրենց կուոյն ու գործիքն ըրին միանգամայն : Յիսուսեանց լուծին դէմ եղած շարժումը խիստ զօրաւոր էր , մանաւանդ ի Գաղղիայ , ուր Ժեբոսնայ

եւ Բարիզի ուսումնարանին աւանդութիւնը խորին կերպով մշակուած էր յաղթական թագաւորութեան օրէնագիտաց ձեռօք : Բարիզի կեդրոնացումը Հռովմայ կեդրոնացմանը չ'էր կրնար համաձայնիլ՝ առանց Գրիստոնէական խղճին օրինաւոր ընդդիմութիւնքն ընդ բանիւ արկանելու : Գոսեմարմայ ժողովոյն մէջ որ երկու ձգտումներն իրարու դէմ էլին . Գաղղիոյ ու Սպանիոյ եպիսկոպոսութիւնք երկար ատեն Պապական յաւակնութեանց դէմ դրին : Այս քիչ շատ ծածուկ վէճը ժողովոյն գլխաւոր օգուտն եղաւ . զի այն ասեաններն զԳրիստոնէութիւն բաժանող վարդապետական ծանր խնդրոց համար՝ աշխատեցան դանել այնպիսի ձեւեր՝ որք բաւական ճիշդ ըլլան վերանորոգումը մերժելու , եւ բաւական մեղմ ըլլան Հռովմէադաւանն որ եւ է դպրոց դուրս չը նետելու համար : « Պապը , կ'ըսէ ծիք յայանեց , այն թէ պէտք է դպրոցականաց դանազան դաղափարներն ազատ թողուլ , որպէս զի՝ առանց հարկաւորութեան՝ որ եւ է դպրոց չ'օտարանայ , եւ Հռովմէադաւանք միացեալ ըլլան ընդդէմ հերետիկոսաց : » Գաղափարաց այս թոյլտուութիւնը դժուար ըմբռնելի են : Գիտցան զասի՝ երբ ժողովէն անմիջապէս յետոյ՝ վերոյիշեալ կանոնը խրմբազրոյններէն երկու Աստուածաբանք՝ բոլորովին հակառակ դրուածներ հրատարակեցին : Պապն իր հեղինակութեան վերաբերեալ հրովարտակաց մասին՝ մեծագոյն զգուշութիւններ ընել սկսաւ : Նայն ձեռքէն եկածը չը ինայեց՝ ժողովք իր իշխանութեան տակ առնելու համար : Օր մը , Պապին կողմնակիցք՝ լուր սփռեցին թէ Գոսեմարմա

ղաքին մէջ ժանտախտը կոտորածներ սկսած է ընել. քաղցր ու սիրուն հիւանդութիւն մըն էր այն որ իր միտքն առաջուց կ'իմացնէր՝ դեռ զո՛հ մը չ'առած : Այլ չուտով հասկցուեցաւ թէ ազատութեան ժանտախտն էր այն . ուստի ի Գուէնդ վերադարձաւ ժողովն , որ ի Պօլօյնը փոխադրուած էր : — Հասկմայ արքունիքը կրնար պիտիլ այս հեռաւորութեանն համար . զի երկար էին իր բազուկները : Աստուածային ներշնչութիւնը կ'առաքէր հարց՝ այն օգնութեամբ լի հռչակաւոր մասաղով , որոյ վրայ բաւական անպատկառ կերպով կը խօսէր Ֆէռիէ , Գաղղիայի դեսպանը : Լախորհողաց միայն գլխարկ կը շնորուեր : Բալլավիչինի անհող կը պատմէ՝ թէ դժուարին պահու մը մէջ՝ Պապին արտաքոյ կարգի դեսպանը , կարգինալ Սօռօն , կը գրէր սուրբ հօր՝ թէ լաւ կ'ընէ եթէ քովը պատրաստ ունենայ բաւական եպիսկոպոսներ , որպէս զի զրկուին ի Գուէնդ՝ երբ իրենց պահանջմանց չափն անցունեն անո՛ր սուրբ անդրա՛նէն : Ժողովը վարդն էր գլխաւորաբար Լէնեդ , մեծաւորն Յիսուսեանց : Երբ խօսէր՝ իր աթոռը ժողովոյն մէջ տեղը դնել կուտար , եւ իր ջղային ձեւերը կոյր հնադանդութիւն միայն կը պահանջէին կարծես : Իտալացի եպիսկոպոսունք իրենց փոթորկացոյղ ձայներովը կը խեղդէին քիչ մ'անկախ խօսքերը : Երբ Գատիքոսայ եպիսկոպոս մը կը հաստատէր թէ մետքօլիտք իրենց դաւառաց եպիսկոպոսներուն ձեռքով կ'օժուէին հին ատենները , նախադահը բուռն կերպով ընդմիջեց դանի , եւ իտալացիք զինք ի լուսութիւն ստիպեցին՝ իրենց արմուկներովն լու հայհոյութիւնն :

րով : « Այդ անիծեալը թող լռէ » կ'աղաղակէին միաբերան երգելով :

Ահա այս դադանի զսպանակներով կը շարժէր ժողովոյն այն « մեծ ու ծանր մեքենայն » , ինչպէս կ'ըսէր Սառքի : Պապական հեղինակութեան մասին երկդիմի արդիւնք յառաջ բերին այս ժողովք . սուրբ հօր անխալութեան խնդիրը զգուշացան առաջարկելու : այլ եպիսկոպոսաց անկախութիւնը երբէք չ'վաւերացուցին , ու Յիսուսի ֆրիստոսի կողմէն ուղղակի հաստատութեան խնդիրը՝ տարակուսի կամ մութի մէջ մնաց : վրան զի Բաւական զարմանալի ձեւի մը տակ , երեւան եկած էր այդ խնդիրը . հարկ էր զիտնալ թէ բնակութեան պարտը՝ Աստուածային թէ Պապական հաստատութենէ բղխելու էր եպիսկոպոսին համար : Այս նիւթիս վրայ եղած տաք վէճերը ժողովոյ կողմէն անլոյծ մնացին . Պապն արգիւնց որ Գուէնդայ կանոնները չը մեկնաբանուին որ եւ է կերպով : Գաղղիայ չ'ուղեց երբէք ընդունել զանոնք , զի թաղաւորութեանց իրաւանցը դէմ էին , թէ եւ խիստ չափաւորեալ՝ Լադուանայ ժողովոց կանոններուն հետ բաղդատելով , որք կարծես Պապին նախատեսեալներուն մէջ դրուած էին :

Յայտ է թէ Գաղղիական ընդդիմութիւնը ո՛րչափ զօրացաւ Ժէ . դարուն մէջ : Երկու մեծ անուններով կ'անձնաւորուի այս ընդդիմութիւնը . Բասկալ եւ Պօսիւէ : Գոստաւանայ սուր ու փայլուն սլաքները անդրալեռնեացոց դպրոցը խոցոտեցին՝ անոր երկդիմութեանց ու փախուստներու մէջէն : Իսկ Պօսիւէ՝ իր վէճերը մեղմելու համար , ստիպ

ուեցաւ դիմել կեղծ թուղթերու հին դրութեանն ,
 ինչպէս կը կարդանք այն գիտնական գործոյն մէջ ,
 զոր Լոյզօն արքայն 1682 ի կղերական ժողովոյն նը-
 ւիրած է (1) : Այս ժողովը , Գաղղիական աւանդու-
 թեանց հաւատարմութեամբ , Ս. աթուոյն յալիը շ-
 տակութեանը դէմ կը հանէր Գօնսդանսայ ժողո-
 վոյն մեծ սկզբունքը , Պապին կարծեցեալ անսը-
 խալականութիւնը կը մերժէր բտրովին : Անշուշտ
 լաւագոյն էր աւելի եւս պահպանեալ եկեղեցւոյ
 անկախութիւնն ի թագաւորութենէ , եւ մանա-
 ւանդ յարգել սակաւաթիւ համակրօններու իրա-
 ւունքը , զոր Պօսիւէի աղաչանացն անսալով ծած-
 կեցին վատաբար : 1682 ի ժողովը կը նորոգէր
 Գօնսդանսայ հարց ընդդէմ խղճի ազատութեան
 գործած ոճիրն . այլ դէթ Հռովմայ դէմ գիտէր
 հաստատ ու ազատ լեզու մը բանեցնել , որ դար
 մը ետ կը ձգէր անդրալեռնեայց յառաջադիմու-
 թիւնքը :

Հոս հարկ չ'է յայտնել այն պարագայներն՝ որք
 Ժ.թ. դարուն մէջ անդրալեռնականութեան թոյլ
 տունն յաղթանակել կամ աճիլ : Գաղղիական յե-
 դախութեանը , կղերին քաղաքային կազմու-
 թեամբն ու ասկէ պատճառեալ հալածումներով ,
 Գաղղիայի հին եկեղեցին առ ոտս Պապութեան
 դրաւ : Նաբօլէոն իր գործը շարունակեց : Եթէ
 մէկ կողմէն Գաղղիական մատենադարան մը կը
 կանգնէր , միւս կողմէն կ'աղաչէր Պապին՝ որպէս
 զի դաշանց դէմ ընդվըզօղ եպիսկոպոսները զըր-
 կէ իրենց պաշտօնէն . ասի սոսկալի յախտակու-

(1) Ժողով կղերին Գաղղիա ի 1682 , յօրինեաց Պ. ար-
 քայն ժիւլ Լոյզօն , 1 հատ . 8 ամալ . Տիտիէ :

թիւն մըն էր : Պ. տ'Օսոնիլ , դարուն սկիզբնե-
 րը տեղի ունեցած եկեղեցւոյ ընդդէմ կայսրու-
 թեան վէճերն ընդարձակօրէն պատմելով , ցոյց
 կուտայ թէ կրօնական ընկերութեան հետ ինչպէս
 վարուեցաւ մեծ բռնաւորը : Աւետարանին մէկ
 խօսքը միայն կարգացած էր . «... Գաղղիայի ,
 եւ անգլիացիները կը շարժարէր զանոնք՝ որ կը յան-
 դըրնէին ամբողջ խօսքը կարգալ , ու տալ գլխ-
 տուծոյն Աստուծոյ : Նաբօլէոն իր գործերովն անդ-
 ըրալեռնեայց էն հզօր քարոզիչն եղած է : Ժօղէֆ
 աը Մէդո ու Լամբնէ ժողովրդեան միտքը նախա-
 պատրաստեալ գտին՝ զանի գահավիժելու համար
 Հռովմէական հոսանքին մէջ որոյ հեղեղն անդի-
 մազբելի ըրին պերճախօսութեամբ : Այսօր անդ-
 ըրալեռնեայք մեծագոյն մաս ունին վատիկանայ ժո-
 զովոյն մէջ , որ իրենց յաւակնութեանց յաղթա-
 նակին յոյս ունի : Սակայն , այդ ժողովին մէջ ալ
 գտին այն « Սօնպօնեան ու Գաղղիական » հին ու
 դին , որ այնչափ երկիւղ աղբեց ի Գոլէնդ , եւ որ
 այսօր աւելի ծանրակշիռ եղած է : Գերմանական
 եկեղեցւոյ հաստատուն գիտութեանն ընկերանա-
 լով : Ասկէ ծագում կ'առնէ այն ծանր ու խառն
 կացութիւնը , զոր չ'է մարթ ի միտ առնուլ առանց
 սեղեակ ըլլալու վատիկանայ ժողովոյն պատրաս-
 տութեանն ու կաղմութեանն , ինչպէս եւ անոր
 վայելած ազատութեան աստիճանին :

Բ.

ի ժողով հրաւիրող թուղթերուն թուականն է

29 յունիս 1868, դարաւոր Յորեւեան սրբոյն Պետրոսի մարտիրոսութեան = Հռովմէական եկեղեցւոյ երկու մեծ մասերն, անհաւասար թուով, ինչպէս եւ մտաւոր ու բարոյական արժէքով, յաղթանակ կամ դէժթ առաւելութիւն ձեռք բերել կը յուսային միմեանց դէմ: Աղատականք կը փորձէին համոզել թէ եկեղեցին տեսակ մը ընդհանուր աշխարհներ պարտ էր ունենալ, որք վերջ տան Հռովմէական կղերին բացարձակ իշխանութեանն = Պապը կրնար օգուտ քաղել եպիսկոպոսաց այն մեծ բազմութենէն, որք Յորեւեանին առթիւ ի Հռովմ կը խուժէին, իր անսխալականութեան վաւերացումը կայթիւներու մէջէն ընդունելու համար = Ժողով մը գումարելով, իր հեղինակութեանն վեր ուրիշ հեղինակութիւն մը ճանչած չէր ըլլալ, ուրիշ հեղինակութիւն մը՝ որ միայն կարող էր իր իրաւունքն օրինաւորելու = Միւս կողմանէ, անդրալեռնայք, այս վերջին ամսոց մէջ տեսնելով որ եպիսկոպոսք հեղ կ'երեւին իրենց յաւակնութեանց առջեւ, դիւրաւ յաղթանակել կը յուսային՝ անհանդստացուցիչ ընդդիմութեանց վախճան տալու համար = Հրաւերի թուղթէն անկարելի էր ժողովոյն վախճանն իմանալ, զի այս թուղթն ամեն ինդիւրներն ի միասին մէջ կը բերէր՝ ըսելով. «Տեղեւորական ժողովը մեծ ինամով պիտի քննէ եւ որոշէ ինչ որ վայել է այս տաժանելի ժամանակաց մէջ՝ վասն ամենամեծ վառացն Աստուծոյ, վասն ամիողջութեան հաւատոյ, պայծառութեան կրօնին, յաւիտենական փրկութիւն մարդոց, հաստատուն դատարարակութեան եւ կարգադրութեան կղերին՝ ամուրի կամ

ամուսնացեալ, պահպանութեան եկեղեցական օրինաց, վերանորոգման բարուց, քրիստոնէական դատարարակութիւն մանկանց, եւ ընդհանուր խաղաղութեան ու տիեղերական ներդաշնակութեան:» Այս նախագծին շատ յարմար է այն հուշակաւոր խօսքը. «մենայն է յամենայն» = Հռովմէական կղերն անոր իմաստը բացատրել ուղած է = Չէլէլէ՞մ Գալլիէ +, որ պաշտօնական օրաբերն եղաւ Պապութեան երբ իր խմբագրութիւնը տեսակ մը միաբանութեան դարձաւ՝ 1866 վերադարձ 6 ին, Հռովմէական կղերին բերանը, Ժողովոյ ներկայացուելիք ինդրոց շարքին մէջ կը դասէր նաեւ Պապին անսխալականութիւնը, կուսին վերափոխումն ու Սէլապիսի վարդապետութեանց հրատարակումն = Պ. Ֆէսլէ, Ժողովոյն յատուկ քարտուղարը, անոնց վրայ կը յաւելուր նաեւ եկեղեցւոյ ընդ պետութեան ունենալիք յարաբերութեանց մէջ Պապութեան աշխարհական իշխանութեան ինդիւրներն = Չէլէլէ՞մ Գալլիէ + վերջին աստիճան պարզութեամբ իր գաղափարը կը յայտնէր Սէլապիսի նկատմամբ = «Աղատական Հռովմէականք կը վախճան որ չ'ըլլայ թէ Ժողովն ընդունի Սէլապիսի վարդապետութիւններն = Բուն Հռովմէականք, այսինքն հաւատացելոց մեծ մասը, ասոր բողոքովին հակառակը կը յուսան» Ասի պայծառ է ու առանց պատ ի պատ բանից = Ժողովը, զայն պատրաստողաց մտքին մէջ, անդարձ դատապարտութիւնը պիտի ըլլալ աղատական Հռովմէականութեան ու արդի ընկերութեան = Չէլէլէ՞մ կը յաւելուր թէ սուրբ հօր անսխալականութիւնը չը պիտի փոխէ՝ այլ ընդունվի միաձայն հաւանութեամբ, եւ թէ այն ժողովը

ները լաւագոյնք եւն սեպուած՝ որք քիչ ատե-
նի մէջ վերջացած են : Այս բառերը նշանա-
կութիւն ունէին, եւ յատակագիծն ի վեր կը հա-
նէին, յատակագիծ մը՝ որ վիճաբանութիւններն
ըստ կարելոյն ճշնելու, եւ ժողովը սին ներկայա-
ցուցիչ մ'ընելու տրամադիր էր : Տեսնենք թէ
ինչպէս այս յատակագիծը գործադրեցին, մէկ
քանի ընդդիմութեանց հակառակ :

Ժողովոյն պատրաստութեան մէջ նկատելի
բանն է սուրբ հօր հրաւերն առ երկու մեծ ճիւ-
ղերն քրիստոնէութեան, որք Հռովմէականութե-
նէ դուրս են : Առաքելական թուղթ զրկուեցաւ .
Անտիոքայ, Երուսաղէմայ եւ Կոստանդնուպօլսոյ
պատրիարքայ . այլ այս թուղթը մերժուեցաւ . զի
Հռովմ երթալու էին լոկ հնազանդութիւն ցոյց
տալու համար : Յունական եկեղեցին իր հնագոյն
աւանդութիւնքը մեջ բերաւ, Ռուսիա կրնար յա-
ւելուլ թէ հեզինակութեան մասին նախանձելու
բան չ'ունէր Հռովմայ վրայ, եւ թէ մերժումները
հալածելու մասին Սէլապի-ի վարդապետութիւն-
ները կը գործադրէր արդէն : Առ բողոքական ե-
կեղեցին ուղղեալ : քահանայապետական թուղթը
կը պարտաւորէր զանոնք իրենց անցեալ ապաստմ-
բութիւնը քաւել : Սուրբ աթոռոյն գերագահու-
թիւնը ճանչել պէտք էր, եւ ո՛չ հակնդդէմ խնդ-
րոց վրայ վիճիլ, ինչպէս Արիոսեանք ըրին ի նի-
կիա : Այդ եկեղեցիք յատեան կը կոչուէին,
պատուաւոր տուգանք ազատելու համար : Բո-
ղոքականք Գռէնդայ ժողովոյն ալ ներկայ չ'էին
գտնուած, թէեւ վիճաբանութեան երեւոյթ մը
ցոյց կուտային անոնց : Ստոյգ է որ Ժան Հիւսայ

ապահովագիրը կը խոստանային անոնց : Ժ. Թ. դա-
րուն մէջ, այն օրինակ երկրորդութիւններէ վախ
չ'ունէին, այլ պատրաստ ըլլալով լուրջ բանա-
կըռուի մէջ մտնելու, կը մերժէին այն ծաղրելի
հրաւերը, որ զիրենք նախադրաւեալ կը կարծէր :
Սուրբ հայրը, հրաւերի թուղթին մէջ կը պահան-
ջէր անոնցմէ՝ « թէ ինչ ցաւալի աղբեցութիւն ու-
նի ընկերութեան վրայ՝ կրօնական սկզբանց հակա-
ռակութենէն ծընած համաձայնութիւնն » : Եւ կը
յիշեցնէր անոնց՝ « այն ողբալի ապաստամբութիւն-
ներն, անկարգութիւնքն ու խռովմունք՝ որովք
պատուհասեցան հերձուածող ժողովուրդք, » : այս
փաստը արեւար երեւցաւ յաջա ազան Անգլիոյ եւ
Ամերիկեան մեծ հասարակապետութեան, ոչ նուազ
տկար երեւցաւ նաեւ Բողոքական Գերմանիոյ, մա-
նուանք բարեպաշտին Սպանիոյ յեղափոխութենէն
յետոյ :

Յունաց ու Բողոքականաց մերժումը՝ զիրենք
ժողովոյ պատրաստութենէն դուրս կը ձգէր՝ գէթ
ի կրօնական մասին . այլ իրենց աեքութիւնները
կրնային քաղաքական շահ սպասել՝ ժողովոյն վրայ
զբաղելով, իրաւամբ խորհէ թէ լաւագոյն դէպ-
քին սպասել : Բուսիա, որ՝ աշխարհն զայրա-
ցուց՝ Բօլօնիոյ Հռովմէականները հալածելով, Հը-
ռովմայ մէջ գետպան անգամ չունի : Անգլիոյ
պաշտօնապէս ծանուցեալ պաշտօնեայ իսկ չ'ունի,
միայն իրեն ներկայացուցին է նրբամիտ դիւա-
նագէտ մը, Պ. Օտօ Ռըսէլ, որ Հռովմայ գործերը
գիտէ քան՝ զայլ ոք, Բրուսիա Հռենոսի դաւառաց
համար հան դետպան ունենալ ստիպուած է . այլ
ժողովոյն նկատմամբ իր բոլոր ըրած գործն արիւշ

բան չ'է բայց եթէ նիստի սրահին համար խիստ
 գեղեցիկ օթոց մը ղրկել, որոյ վրայ ինք ալ 'ի
 ծունը չուզեր գալ անշուշտ վանական կոյր հնա-
 ղանդութիւն ցոյց տալու համար: Ամէրիկայի Միաց-
 եալ—Նահանգներն ալ գեոսպանատուն ունին, այլ կը
 կասկածիմ թէ իրենց յոգնած քաղաքագէտներուն
 հանգիստ ու զբօսանք տալու համար մարդ կը
 ղրկեն: Պապին հետ ինչ գործ կրնայ ունենալ
 ղեկեղեցին ի տէրութենէ՝ զատելու սկզբունքն
 ստեղծողը: Աւստրիոյ, Սպանիոյ, Իտալիոյ եւ
 Գաղղիայի համար այս այսպէս չ'է, զի անոնց ժո-
 ղովորոց մեծ մասը Հռովմէտէաւան է: Սակայն
 այս մեծ տէրութեանց եւ ոչ մէկն ուղեց ներկայա-
 ցուցիչ ունենալ ժողովոյն մէջ: Իտալական թագա-
 ւորութիւնն ու Սպանիա շատ մեծ պատճառներ
 ունեին ի մօտուս չ'անարգելու համար զայն Պա-
 պական շանթերը, որք եկեղեցւոյ ինչքը գրաւո-
 ղաց դէմ կուղղեն: Իսկ Աւսթրիա դաշանց կապե-
 ըը խղել կայ խառնի, որք անոր ազգային էութիւ-
 նըն ի վտանգի դրած էին: Գաղղիա քանի մը փա-
 խուսաներէ յետոյ, յարմար դատեց ամեն պա-
 տասխանատուութիւն ժողովոյ մը վրայ ձգելու,
 ոչ ինչ կրնար արգելուլ, եւ ուր իր Պապին միջո-
 ցաւ հաճելի չէր իրեն ներկայ գտնուիլ իր հասա-
 ըակցին իրաւանց դատապարտութեանն: Ինչպէս
 որ Պ. Էմիլ Օլիվիէ 1868 յուլիս 8ին Վատիկանոյ
 ժողովոյն վրայ խօսած ճառին մէջ ըսաւ, քաղա-
 քային իշխանութեանց այս զանցառութիւնն ժա-
 մանակին յառաջդիմութիւնն ու երկու իշխանու-
 թեանց անջատումը ճեպող անդիմադրելի հոսան-
 քը կը ցուցնէ:

Հռովմէադաւան տէրութիւնք չէ թէ միայն
 ներկայացուցիչ ունենալ չուզեցին ժողովոյն մէջ,
 այլ հօգ տարին որ չը ծանրանան երբէք անոր
 վրայ որ եւ է կերպով: Մնցեալ ամառ, Հօհենլո-
 հայ իշխանը Եւրոպական կառավարութեանց մէջ
 համաձայնութիւն մը հաստատել փորձեց՝ տեսակ
 մը նախնական ազդեցութիւն ընել ուղեով այն
 ծանր սրոշմանց վրայ, յորս ժողովը կը մղեն Մնդ-
 րալեւնայք, խնդրելով որ Սէլուպիան ու Պապին
 անխաբարականութիւնն ընդունի, եւ ասով արդի
 Եւրոպիոյ կառավարութեանցն հետ ունեցած ա-
 մեն գաշինքն 'ի չիք գարձնէ: Միւնիքայ ար-
 քունեաց գլխաւորն իրաւամբ դիտել տուաւ թէ
 վատիկանայ ժողովը այս ճամբուն մէջ մանելով,
 կրօնական շրջանակէն դուրս կելնէր, եւ տերու-
 թեանց խաղաղութեանը կըսպառնար: Պալիէսի
 աստուածաբանական կաճառին համար, այս նոր
 վարդապետութենէն յառաջ դալիք քաղաքական
 փոփոխութեանց մասին տեսակ մը հարցարան խմբ-
 բազրած էր: Երկդիմի եւ շիտթ պատասխաններ
 միայն ընդունեցաւ, որք առանց ոչ ինչ ճշդելու,
 կը ցուցնեն թէ ծանր փոփոխութիւններ կարելի
 են տեղի ունենալ: Առ կառավարութիւնս ուղ-
 դած շրջաբերականն անպտուղ մնաց: Մենապոէս
 ղօրապետը ծանոց թէ իտալական կառավարու-
 թիւնը պիտի մերժէ ինչ որ իր Մահմանադրու-
 թեան հակառակ է: Գաղղիական պաշտօնէու-
 թիւնը, ծերակոյտի մէկ հարցին պատասխանելով,
 ըսաւ թէ աճապարելու համար, նախ պէտք է ժո-
 ղովոյն որոշմանցն տեղեկանալ, եւ թէ ամեն պա-
 րագայի մէջ եկեղեցւոյ ազատութիւնը պիտի յար-

դերձ առանց տէրութեան իրաւունքն ուրանալու :
 Ահա հին ժամանակաց Գաղղիականութեան շատ
 հեռու ենք . ստոյգ է որ այն սոր պէտք չունինք,
 եւ տիեզերական հրատարակութեան դարու մը
 մէջ անմտութիւն է Պապին թուղթերուն հրատա-
 րակումն արդեւրու : Կոչումնք, որպէս եւ կեղծ-
 մունք, զանդրալեռնեայ եպիսկոպոսունս ետ չեն
 կեցներ՝ զեկեղեցին իրենց ուղածին պէս վարելու :
 Գաղղիական կառավարութիւնը, որ իր երկրից
 մէջ Անդրալեռնեայց դէմ բան չը կրնար ընել, ի
 պաշտպանութիւն ասոր կրնայ Հռոմայ մէջ շատ
 բաներ ընել . զի Գաղղիա է որ կը պահպանէ ըզ-
 սուրբ Պետրոս, եւ զինեալ պաշտպանութեամբ
 կարելի կրնէ ինչ որ որոշուի եւ ժայթքի այն ըն-
 կերութեան դէմ, զոր մեր զինուորք կը ներկա-
 յայնեն :

Եթէ կառավարութիւններէն զանազան եկե-
 ղեցիներուն անցնինք, ժողովէն քիչ մ'առաջ ա-
 նոնց կրօնական ոգուոյն շարժումն ուսանելու հա-
 մար, շատ տարբեր ու շատ հակառակ միտումներ
 պիտի տեսնենք : Հռոմն ու Պապութիւնը պահ մը
 մէկ կողմ դնելով, հաւաքենք այն գլխաւոր ցոյցե-
 ըր, զոր հռոմէադաւանութեան երկու մեծ ճիւ-
 ղերն ըրին, այն կէտին՝ յորում կը պատրաստուէին
 վատիկանայ շքեղ եւ որոշիչ ժամադրութիւն :
 Անդրալեռնեայ մասը հաստատ յուսով լի ցոյց ար-
 ւաւ ինք զինք : Գիտէր մեծագոյն մաս ըլլալը եւ
 սուրբ աթոռոյն կատարելապէս համաձայն է՝ Ա-
 բուրէք համօրէն, Բրօքականտի դպրոցէն ելած իր
 առաքելական փոխանորդներովն, այդ մասին կը
 պատկանէր : Այդ պարզ ու անձնուէր մարդիկ,

անուս եւ հլու, Պապութիւնը կը պաշտեն : Հարա-
 ւային Ալիքիկէն այս նկատմամբ Աբուելից կը հա-
 ւասարէր : Թէ եւ Միացեալ Նահանգաց մէջ Հը-
 ումէականութիւնը կրցած է զարմանալի մեղմու-
 թեամբ գլուխ ծռել ազատ հաստատութեանց առ-
 շեւ, թէ եւ հասարակապետութեան հողին վրայ
 ծնած քանի մը եպիսկոպոսներ քաղաքական մա-
 սին մէջ ազատական են բողոքովին, սակայն եւ
 այնպէս անոնցմէ շատերն առհաւատչեայս տուած
 էին Անդրալեռնեայց, որք նոյնպէս վստահ էին իր-
 լանտացի եպիսկոպոսաց վրայ : Սակայն Ամերիկեան
 կղերին մէկ մասը եկեղեցւոյ քաղաքային իշխա-
 նութեանց առջեւ հարկ եղած ազատութիւնը պա-
 հանջեց : Այս ցոյցն իր տրամադրութեանցը վը-
 րայ չափազանց յոյսեր տուաւ յղանալ, զի ստոյգ
 է որ այն ժամուն փոքր մասն էր որ կը խօսէր :
 Մեծին Բրիտանիոյ Հռոմէական եկեղեցին Պապա-
 կան մասին ձեռք անցած է բողոքովին : Իրլանտա-
 կան մասը, որ իր անկախութիւնը փառաւոր աղ-
 քատութեան մը մէջ ուղեց պահել տէրութեան
 թօշակը մերժելով, աւելի կրօնամոլ է քան լու-
 սաւորեալ : Երկար ատեն հալածուած փոքր մասն
 մը եռանդն ունի, եւ զայդ եռանդը չը կրցաւ
 խաղաղել այն հաշտական մեծ միջոցը, որով փա-
 ռաւորեցան կլէսաթօն ու պաշտօնեայք : Բուն
 Անգղիական հռոմէադաւան եկեղեցին երկու
 պատճառաւ չափազանցութեան կը դբդի . նախ
 որ ազգային կրօնէն անջատեալ է, եւ երկրորդ որ
 լոկ նորադարձներու եկեղեցի մըն է, առանց Անի-
 լո—Մաքսոն ժայւր ցտեղու առիթն ունեւրու : Իր

ամենէն նշանաւոր ներկայացուցիչը, Մաննինկ արք եպիսկոպոսն, Օքօրդայ վաղեմի ընկեր մըն է : Նախ ինք կանգնեց Պապին անսխալականութեան դրօշը ցոյցի մը մէջ, որ շատ աղբեցութիւն ունեցաւ եւ կողմնակիցները խրախուսեց : Պէճիգայի մէջ հռոմէականաց ու աղատականաց կրքոտ վէճերն հռոմէականաց մեծ մասն ամենէն կատաղի Անդրալեոնականութեան ծոցը գլորեցին : Պ. Տըշան ալ սուրբ հօր անսխալականութեան վըրայ խնդրագիր մը հրատարակած էր, որ մեծ արձագանք գտաւ . անով կարելի եղաւ ժողովէն առաջ դուշակել այն զանազան կացութիւնները որ տեղի պիտի ունենային : Ճինէվա նոյն կուսակցութեան ընծայեց իր ամենէն սիրելի պերճախօսաց մին, բացարձակ վարդապետութիւնը ծագկանց տակ ծածկելով . այդ անձն է Պ. Մէուսիցեօ, կերբոնայ եպիսկոպոս, որ թէ եւ Անդրալեոնեայ ու արմատական այլ միշտ հաճելի է եւ սիրուն : Իտալիոյ Անդրալեոնեայք գործի մարդիկ են, որ ո՛չ գրեւ գիտեն ո՛չ խօսիլ . իրենց Սպանիացի պաշտօնակցաց հետ՝ ժողովոյն մէջ այն օգտակար կրօնաւորաց տեղը կը բռնեն՝ որք, ըստ բանից Բասքալաց, որ ՚ի վախճան վաստից զիրաւունս աւպատուէրս ունին : (•)

Գաղղիոյ Անդրալեոնեայք արդարեւ մեծագոյն կարեւորութիւն մ'ունին . բազմաթիւ են անոնք, զի գարուն սկիզբէն ի վեր նախնի Գաղղիականութիւնն հետըզհետէ իր վարձը կորոյս : Ժառանգաւորաց վարժարաններուն մեծագոյն մասը Պապական յեռմանց ենթակայ է : Սէն Սիւլբուս գեռ քիչ մը կը մաքառի, անուն իր վա-

ռաւոր աւանդութեանց : Լրագրապետ մը, որ թշնամաներու մէջ շատ վարպետ է, շատ օգնած է մտաց այս փոփոխութեանը : Չէլէրա Գալօլիս ի բոլոր տեսութիւններն առած, զանոնք դպրոցական ծանր պատեանէն մերկացուցած եւ տաշելով տեսակ մը սուր նետերու փոխած է զանոնք, որք ամենէն աղբու թոյնն են, այսինքն կրօնամալութեան թոյնին մէջ թաթախուած են : Յօգուտ ժողովոյն բազմաշուկ ստորագրութիւն մը բացաւ, հասարակաց կարծիքը յուղելու համար : « Ո՛վ սըբբուհի կոյս, կաղաղակէր ստորագրող մը, Պապն քղքեղ անարատ հուշակեց, դու ալ ջանայ որ անսխալական ըլլայ անի : » Ասի փոխանակութեան օրինաց մէկ երջանիկ գործադրութիւնն էր . «•••» : «•••» : Հռոմ երթալու միջոցին Անդրալեոնեայ պահանջմանք կարկուտի պէս հեղալ սկսան : Բազմաթիւ եպիսկոպոսունք սրտաշարժ անսարանաց փոխեցին իրենց հրաժեշտները . մեծ շքեղութեամբ ընդունեցան այն ուղերձները, որ կաղաղակէին անոնց ջերմ պաշտպան կալ՝ սուրբ հօր անսխալականութեան : Երկնային ձայն մը կարծելով իրենց խորհրդոց արձագանքը, խոստացան արխանալի Հռոմ :

Աղատական հռոմէականութիւնը շատ աստիճաններ ունի : Թէ եւ ամեն ուրեք կողմնակիցներ ունի, նոյն խկ յԱնդղիա եւ ի Պէճիգա, սակայն երբէք այնչափ հաստատ ու յանդուգն չէ այլ ուր որչափ ի Գերմանիա : Աղատ գիտութեան այս աշխարհավայրին մէջ մարթ չէ բնակիլ անպատիժ : Աղղին հանճարը դժուարաւ ընդ լծով կիցնի, մանաւանդ ի մասին գաղափարաց . զի Գերմանիա

քաղաքային կենաց մէջ յաճախ նեղ երեւցած է : վերանորոգման մեծ եկեղեցեացն հետ ունեցած յարաբերութիւնը շատ օգտակար եղաւ Գերմանական հոռոմէադաւանութեան , որ փոխանակ իր վանքերուն մէջ ընկրկելու իբր ի բերդաքաղաք խաւարասիրութեան , խառնեցաւ համալսարանական կենաց , որ այնչափ անկախ է Գերմանիոյ մէջ : Իր դպրոցներն ունեցաւ ի Միւնիք , ի Գիւպէնի , որք նշանաւոր հանդիսացան մեծամեծ աշխատութիւններով : Կէօֆէլայ եւ Մէօնլոայ պէս մարդոց կրցաւ նշանաւոր աեղ մը տալ ժի՛ դարուն մեծ աստուածաբանաց փաղանջին մէջ : Անդրալեւնականութիւնը յաջող պայմաններ չունէր զարգանալու համար այն ընդարձակ ու խորին զխոութեան ու խորհուրդազդեցիկ բարեպաշտութեան երկրին մէջ . անչուչտ կը յաջողէր հոն հաստատուիլ , այլ չունէր որ եւ է ազդեցութիւն Հարաւային Գերմանիոյ մէկ քանի դաւառներէն դուրս : Երբ Պապին հրաւէրի թուղթն երեւցաւ Չէ՛լէլքոմ Գաբօլէտի նախագծին հետ , անմիջապէս Յիսուսեանց յաւակնութեանցը դէմ սկսաւ հզօր ընդդիմութիւն մը կաղմուել : Յուլիս ամսոյն մէջ Կաթէլ րբ Բաբէլ Գերմանացի Հոռոմէական ստորագրեալ ցոյց մը կը հըրատարակէր , որ բարեպաշտ ու ականաւոր աշխարհականաց իղձերուն արձագանքը կը հնչէր յափանց Ռէնայ : Ահա յանուն եկեղեցւոյ սիրեալ գոյն շահուց անոնց բրած չափաւորեալ ու հաստատ պահանջմունքը . « Եթէ ընդհանուր ժողովոյ մը մէջ եպիսկոպոսունք միայն իրաւունք ունին վրձուելու , դէթ ի նկատողութեան պէտք են առնել եկեղեցւոյ ամեն անդամոց դաղափարներն ու վա-

փաքները . աշխարհականք ալ քահանայից հաւասար ազդեցութիւն կրնան ունենալ ժողովոյ մը որ շահնցը վրայ : Անդրալեւնակայ աշխարհականք արդարեւ բարձրաձայն խօսող կը քստ շրագրաց մէջ նեղուելէ ետ չեն կենար : Այս մասը Հոռոմաց մէջ չունի իր գործիքը , Չէ՛լէլքոմ Գաբօլէտ որ անոր նպատակներն ի գլուխ հանելու կը ճգնի եւ ունդեամբ , եւ մեք իրաւունք չի պիտի ունենայինք ըսելու . մենք այս տեսութեանցն ու յուսոց մասնակից չենք , ընդ հակառակն ամենայն զօրութեամբ անոնց դէմ կը մարտնչ ի՛նք : » Գերմանացի Հոռոմէականք այս չորս կէտերուն վրայ կը վրձուէր : Կը պահանջէր որ եկեղեցին հրաժարի թմենքաղաքական զօրութենէ , որ երկու մեծ իշխանութիւնք շարժին իւրաքանչիւրն իր շրջանակին մէջ , որ բոլորովին վերջանայ ինչ որ միջին դարու աստուածապետութիւնը կը յիշեցնէ : « Չը կայ բան մը , կըսեն , որ զմիտս եկեղեցիէն հեռացնէ այնչափ որչափ երկիւղն այնպիսի վարչութենէ մը , որ ըզբընութիւն կը ծառայեցնէ կրօնին : Տերութիւնն այն ատեն կատարելապէս քրիստոնէայ է երբ բընական կարգի սահմանաց առջեւ կանգ առնելու , եւ դերքնական կարգին մէջ չը հեռամտելու հարկ կը ճանչէ , խղճի եւ կրօնի կատարեալ ազատութիւն տալով միանգամայն : » Պահանջուած երկրորդ կէտն է թէ եկեղեցին մտաւորական մշակման ու դիմութեան առջեւ կանոնաւոր դիրք մը ունենալու է , ալ ատեն է վերջ տալ սին ու վըտանդաւոր բանադրանաց : Երրորդ կէտն է աշխարհականաց եկեղեցւոյ կենաց մասնակցութիւնը ժողովրդեան նեղութիւններուն հոգատարութիւնն

ու անջատեալ եղբայրները միապետու նոր ջանքից հարկաւորութիւնը վերջապէս քօպէնցայի հոս մէտքաւանք հոսմանիս արգելադրին բարձու վեր պահանջեն, որ քրիստոնէութեան ոսոխներուն հետ որ եւ է յուսադրեալ ու անհողմակալ վիճարանութիւնն անկարելի կրնէ որ զի մտն էին Քօլոնիի ցոյցէն անմիջապէս յետը կաշին ո՞ւր եւ որ եւ լրացողն մէջ Բանու կեղծ անուան տակ նամակաց շար մը տեսնուեցաւ : Այս նամակներն ՚ի մի հատոր կաղմեցան ք հրատու թէ Անգրապետ նեաց զլիաւոր ակոյեան Տօլինժէն հոսչակաւոր կանոնիկոսը զանոնք շարագրեց, կամ գէթ ներ շնչեց : Այս ականաւոր զլիաւանն անաջին կարգի աստուածարանն ու պատմագէտն բարձր իրաւանք ունի մայն բարձրացնելու իր եկեղեցւոյն մէջ : զի րոյ անհուն սարման ըմբոյց իր պատմական ու վիճարանական լիստանիքը զպատմա կան իշխանութեան քէմ 1838ին հրատարակած մէկ դործոյն մէջ կը հոսակերթէ մը իշխանութիւնը հոսմեականութեան Աքթիլեանն զարշապարն է : Տօլինժէն շրտա պերճարթա հեղինակ մին է և եւ իր երկրին մէջ շատ արդար յարգուք կը վեր յերէ ի թիւ ինք չէ Գանձի հեղինակը : զի ի հաստատուէ զոյն իր իր իր անուան անուան իր անուան մակալ ըսլ ի հաստատուէ արդար իր արեւմէր մէկ հզոր զորս արեւմէն մէջ քիւն էր ո՞ր Օկտոբրիկ նամակաց կենդանի եւ հիմաւոր ծրար իրն է այն ք Գանձի ըստ ոսմական կրեղին զէմ էն ասակալի արդատանութիւնն է : զի անոր պատմութիւնը կրնէ և եւ անոր յստիշատակութեանց ու ներդրութեանց արդար զգաւ

կերը կը ցուցնէ : Գառաշարանին հետեւեալ մասը զաղախոր մը կուտայ ընթերցողաց :
 « Մենք զրեցինք ծանր վտանգի մ'աղղեցու թեանը ներքեւ, որ նախ Հոսմեական եկեղեցւոյն ու անոր ներքին կացութիւնը կը ըստառուայ քայց ք եւ որ իր իրերը չը կը նոր ըլլալ 180,000,000 մարդէ բաղկացեալ ժողովոյ մ'առջեւ, այդ վտանգը ք զէն արեւելեալ կը մեծնայ ք եւ ընկերական մեծ ինք ըսլ մը վերածուելով, եկեղեցւոյնիս ընկերականութեանց ու Հոսմեական եկեղեցիէն անջատուած ազգաց միանգամայն կը ստառուայ ք իր անուանը :
 « Այս վտանգը երեկ չը ծնաւ ք կամ ժողովոյն դուռնարմանէն յստալ չեկաւ ք Գանձի շրտա արեւելեան է մը ըստ յետագէտ շարժումը Հոսմեական եկեղեցւոյն մէջ սկսած է զդայու ի վեր այսօր քարձարացոյ մակընթացութեան մը պէս ք ժողովոյ մը միջոցաւ կուղծ հոսմայն եկեղեցին քրտուելեա անոր բոլոր կենսական սլժը կրնէ :
 « Մենք, — եւ պէտք է գիտնայ որ քաղաքական յոգնակի մը չէ այս, — մենք ք ինչ որ Հոսմեական եկեղեցւոյն եւ իր պաշտօնին կը մեք ըմբերն մենք կը նկատենք զայն համաձայն այն զաղախորին, զոր աղաոսական կանուանեն ոտուք : Մենք համակարծիք ենք անոնց որ եկեղեցւոյն անմիջական կամ յամր, ընդհանուր ու որոշ ի վերանորոգումը հարկ եւ անհրաժեշտ կը համարեն :
 « Մեզի համար, Հոսմեական եկեղեցին ու Պապականութիւնը իստա տարբեր բաներ են : անի կը հետեւի որ, եկեղեցական արածքին համար աստ թեան հակառակ, մենք երբ քննուէն յոյժ անջատ ենք անոնցմէ որոյ երեւակայած եկեղեցա

կանութիւնն է տիեզերական կայսրութիւն մը, հոգեւորական, կամ թէ կարելի է աշխարհական վեհապետի մը ներքեւ, — բռնութեան ու ճնշման կայսրութիւն, յորում աշխարհական իշխանութիւննր եկեղեցականին կը միանայ՝ պատժելու եւ խեղճելու համար այն ամեն շարժումները որոց հաւան չէ այս վերջին իշխանութիւնը:

« Գիտենք որ շատեր այս մատենին հեղինակներուն դէմ պիտի զայրանան, ընդ այն զի Պապութիւնը կուրանանք հիմնովին: Արդարեւ դեռ բազմութիւ եւն անոնք՝ որոց համար իմաստ չունի Ս. դրոց սախօսքը, « Եկեղեցականաց վաճառքի տէրէնք », բնական ճշմարտութեան օգտին: Անոնք չի պիտի սեղեն հասկնալ թէ կարելի է հաստատութիւն մը սիրել ու պատուել ժամագամայն անոր թերութիւնքը յայտնելով, անոր մոլորութիւնքը ծանուցանելով, եւ անոր շար աղօթեցութիւնը մատնանիչ ցոյց տալով: Ըստ անոնց, լուռ կենալու է եւ այսպիսի իրերու մէջ, կամ զանոնք արդարացնելու համար միայն ի բերան առնելու է: Երկար ատենէ ի վեր է որ այս պարտադանցութեան բարեպաշտութեան անունը կուտան . . . »

« Մենք ընդ հակառակն այնպէս կը կարծենք թէ բարեպաշտութիւնը եկեղեցւոյ եւ ճշմարտութեան աստուածային հաստատութեանը պարտելի է, եւ ահա այս բարեպաշտութիւնն է որ կը գրդէ զմեզ ազատ համարձակ կանգնել եկեղեցւոյ կամ ճշմարտութեան կերպարանավորմանն ու այլապրութեաննը դէմ . . . թողնելն մեզ՝ որ եկեղեցւոյ ոգւոյն համեմատ վարուելու ս յապացոյց երկու զճիւ-

մէջ բերենք, որոց մէկը Պապի մը եւ միւսը յարգելի սուրբի մը կը վերաբերի: Իննստան Գ. կըսէ Թաւեղաս տոս վէլ ամեն անգիրգիրսն դօլեառտէ նոն քեպէր: Եւ սուրբն Պէռնար կը յայտնէ. Մէլեա էսք ուր սքանալում. օրագրոս, քոսամ վեղեղաս սէլեմքսարոս:

Ուրիշ աւելի յանդուզն գիրք մ'ալ երեւցաւ, Յանուէն վերջը, վերանորոգած Հռոմէական եկեղեցւոյ յանրամա եւր է- է Գլախ, գործ ժողովոյն (1) տխարասով: Հեղինակն աւելի ազագային վրայ կը խորհի քան ներկային. գրգռիչ բառ չը գործածեր երբէք: Գոհ կը լըլայ ճշիւ ու համառօտիւ նկարագրել այն կայսրութիւնը՝ յորում Յիսուսեան Հռոմէականութիւնը դրաւ զեկեղեցին, յետոյ ցոյց կուտայ այդչափ ծանր չարեաց համար պէտք եղած դեղերը:

« Իմ գիրքս, կըսէ հեղինակը, ուրիշ բան չէ, բայց թէ Գերմանացւոյ մը ազատախօսութիւնը, Գերմանացւոյ մը, որ հռոմէացւաւանութեան շահերը կը կրէ ի սրտին: Այս ազատ խօսքը հռոմէացւաւան եկեղեցւոյ վերանորոգումը կը պահանջէ բուն իսկ իր գլխէն ու անդամներէն սկսեալ, ինչպէս նաեւ անոր բուժումը՝ հռոմէական կղերին հասուցած չարիքներէն: Այդ հռոմէական կղերն ի մահ վերաւորեց զեկեղեցին ամեն եկեղեցական իշխանութիւնները Հռոմայ մէջ կեդրոնացնելով, իր եկեղեցական վրճիւնները պաշտպանելու համար անդադար նիւթական ուժին հրաւեր կարդալով, ժամանակին ա-

(1) Աէֆօրմ ատը սէօմիսիէն Քիրխէ ին Հօրդ ունա կլիտէսն:

մեն դադարարացն ու պիտոյնը հակառակ, ընկերային սկզբունք հաստատ պահելու յամառելով, զաշխարհական արտաքսած է ի կենաց եկեղեցւոյ եւ անիծած է ամեն գիտութիւն որ իր նշանաբանը չընդուներ : Այսպէս անա զհռոմեացւանութիւն անպատուեց, ներկայացնելով զեկեղեցին իբր ոստիկանութեան հաստատութիւն մը, ընկերային կարգին մէջ, եւ իբր խնայարի իշխանութիւն մը մտաւորային կարգին մէջ : »

Հեղինակը սրբոյն Ս. Գրոսիոսի սա խօսքը կը յիշեցնէ ի վերջ բանից . « Բահանայն մը համար չիք ինչ որ այնչափ վտանգաւոր ըլլայ առաջի Աստուծոյ եւ այնչափ անօթալի առաջի մարդոց, որչափ իր զգացումը չբեր ազատագար : » Ճշմարտութեան սէրն է որ գինք կը խօսեցնէ, եւ իր միակ մտաւորն է « բոլոր սեր աշխարհի վրայ զայն հուրը, զոր ֆրիստոս վառեց մարդմունքն ու չարքիքը բախելու համար : »

Այս ցոյցերէն յետոյ հրատարակուեցաւ Պրոքըզայն հաշտուող ազգը, ըսան Գերմանական եւ պիսկոպոսաց ստորագրութեամբ : Խիստ բարեխառնքն, կամ մանաւանդ ջակաղանց բարեխառն ընդուն մը գործածեցին : Սակայն ստորագրող եպիսկոպոսաց միւսքը տարակցա կը վերցնէր, ի ներքուստ բողոք կը բառնան ի Հռոմ պատրաստուած ներուսն դէմ, այն իրենք ալ կը գործածեն զայն հնարքը : զոր Պարսկաստանի արքունեաց նախարարք ստեղծեցին երբեմն իրենց վեհապետին խորհուրդ տակու համար : Այդ նախարարք չընդներ բողոքն կը յօրինէին, իրենց վեհապետին այն յատ-

կութեանցը վրայ, զոր չունէր եւ զոր կուզէին որ ունենայ : « Ռիվեժ արքայ, որ զպիտաբարտաճեան էք » կրտէին անոր, երբ շատ կծծի կրտսնէին զանի : Այսպէս անա Գրոքայն Եպիսկոպոսք, որք իրաւասք կը վախճան յոր շրջլայ թէ ժողովը նոր վարդապետութիւններ հաստատէ, արդի ընկեղբունութիւնը դասապարտէ եւ բնական ազատութիւն չունենայ, իրենց ուղերձին մեջ այսպէս կը գրեն : « Տիեզերական Ժողովը չը կրնար երբեք Ս. Գրքին ու առաքելական աստուածեանց գործնոր վարդապետութիւն ստեղծել : Երբեք անկեղբական Ժողով մը չը կրնար յօրինել այնպիսի նկարագրն որք հակառակ ըլլան արդարութեան եւ իրաւանց, տէրութեան եւ ճշմարիտ շահաց դիտութեան եւ օրինաւոր պալատութեան : Սուս է ըսել թէ ժողովը նկարեւորապէս անպատուութեան գործ է իր գործառնութեանց մէջ : » Ահա իսկ Գրոքայն ընկերայնաց համար արդար խաղ զին է ասի : Բայց որչափ նորոգուու յորդական ըլլայ Գրոքայն ասկը կը թը, խմուար յօյանի է : Սնդ բնութեանս կեցութեան եւ անոր նախադրին դէմ կը ընէ յայնմայնս :

Հունդ արական հռոմեացւան եկեղեցին խիստ ազատամիտ երևոյս : Հռոմեական կղերին յաւանականութիւնը մեղմելու շատ արամազեք է : Այն մասին կրնայ գաղափար մը տալ ընթերցողաց այն հաստատ լիզուս, զոր անոնց անառկը գործածելը Հունդ արական կղերին երևելի անդամներն մէկը ի բեշ թ դու մարտապէս հռոմեացւան մասնակար մըն միջմէջ ճասից զանա՞ զօր այս սնդ

« Հռոմեական աշխարհը մեծ գիտաց կ'ապրանէ »

բան մը չը կեղծ ենք, եւ դիտցածնիս ըսենք յայտնապէս : Հռոմէական աշխարհն երկու մեծ մասերու կը բաժնուի, մէկն ազատական, որ արդի վիճակին հետ կուզէ փայլել, — միւսն Անդրալեոնեայ, որ ամենէն չափաւոր մտաց ազատութենէն կը ստկայ : Ես հաստատ համազում ունիմ թէ այս ժողովին մէջ գտնուող Հունդարական հռոմէադաւանութեան ներկայացուցիչք, կրօնի եւ հայրենեաց սիրով վառ, յիշելով թէ իրենց աշխատութիւնք եկեղեցւոյ եւ հայրենեաց օգտակար են, — թէ օր մը զիրենք պիտի դատէ սրտամութիւնը, Հռոմէական ազատամիտ գաղութարաց կողմը պիտի անցնին աներկմիտ :

« Աւետարանը երբէք աղատութեան թշնամի չէ . ընդ հակառակն, իբր ազբիւր, յաւիտենական սիրոյ, իբր ճաճանչ Ստուածային լուսոյ, նոյն իսկ ազատականութիւնն է այն : Ժողովք կը յուսամ որ այս դադափարը պարզութեամբ ու արութեամբ պիտի պաշտպանէ, եւ իր անգամք, իրենց բոլոր դործերուն մէջ, պիտի ապացուցեն թէ եկեղեցւոյ եւ հայրենեաց կուզեն միանգամայն ծառայել այս դադափարն ընդհանրացնելով : Անոնցմէ եւ ոչ մէկը պիտի պաշտպանէ զայն մասը, որ եկեղեցւոյ հետ նոյնանալ ուզելով, կաշխատի ապացուցնել թէ եկեղեցին երդուեալ թշնամին է արդի վիճակին, եւ այսպէս ի կորուստ կը մասնէ ըզհռոմէականութիւն :

Կրտեն թէ այն պատկերին մէջ, զոր յատկապէս սուրբ հօր համար շինած են որպէս զի կարենայ զանազան եկեղեցեաց օգուոյն վրայ դադա-

ժար ստանալ մէկ աննարկով, Բօրթուգայր Յունդարեոյ քով գրուած է իբր ազատական ընդդէմութեան կուսակից : Լաւ չենք գիտեր թէ Գաղղիայ ի՞նչ տեղ բռնած է այդ պատկերին մէջ : Եթէ քուէներն հաշուենք՝ ճերմակ գունաւորեալ ըլլալու է . եթէ դանոնք կըսենք՝ Գաղղիա գէշ տեղ բռնած ըլլալու չէ այդ հուշակաւոր պատկերին մէջ . զի ստոյգ է որ իր բարձրաստիճան կրեքին բարոյապէս ու մտաւարապէս ընտիր մասը ազատական ձրգտման կը վերաբերի, սկսեալ Փարիզի արքեպիսկոպոսէն, Գաղղիոյ այդ հարազատ որդին՝ որ հռոմէական կրեքին ատելութեանն արժանացաւ : Ամեն մարդ կարգացած է այն նամակը յորում Պապը զանի կը կշտամբէր, իր երկրին օրինացն այնչափ խստիւ հնազանդելուն, որչափ խստիւ հռոմէական բացարձակութեան դիմադրելուն համար : Փարիզի Պ. արքեպիսկոպոսը ժողովոյն վրայ մեծ չափաւորութեամբ կարծիք յայտնեց : այլ նոյն իսկ իր անձը ազատական նկանա կազիր մըն է : Սօսպօնայ աստուածաբանական ժողովն իր փառաւոր արանդութեանց հաւատաբով մնացած է, Բայտ է թէ ի՞նչ աղմուկ հանեց ընդհանուր ժողով եւ կրօնական խորհուրդին տիտղոսով նշանաւոր գիրքը, զոր Սօսպօնայ գահերեց զիտուն արբայն հրատարակած է, յորում ոտն առ ոտն կը կուտի Անդրալեոնականութեան հաստատութեանց դէմ : Ժողովոյն Պապին վրայ ունեցած գերազուանութիւնը ծանուցանելէ զատ, եկեղեցւոյ ընտիր ժողովոց շրջանաւոր ըլլալը կը պահանջէ : Անոր պաշտօնակիցը կուսակի արբայն յատարեզ կիջնէ, եւ մեծ եռանդով մը կը յար-

ձանի Մնդրալեռնեայ գիտնոյ պատմական մէկ
 խարդախութեանցը դէմ, որ վեցերորդ արեղե-
 բական ժողովոյն մէջ Հոնորիոս Պապին դատա-
 պարտուելուն կը վերաբերի : Բացարձակ իշխա-
 նութեան ու անսխալականութեան ի պաշտպանու-
 թիւն՝ Հռովմական աղօթադրքին մէջ սարդած յՍ
 ընկածոյ խարդախ անոնց դործը, կըսէ առաջին
 նամակին մէջ, այդ միակ դործը, եւ դեռ ուրիշ-
 ներ ալ կան, բաւական է առաջի Աստուծոյ եւ
 առաջի մարդկան, առաջի հաւատոյ եւ պատուոյ
 արգիլել մեզ կասկածելի բան մը հռչակելու այս
 մասին, վասն զի ստախօսութիւնն իրեն դաշնակից
 ըրած է : » Այս նիւթին վրայ Մնդրալեռնեայց
 կողմէն թշնամանաց անձրեւ մը տեղաց Մառէ եւ
 կռադուի աբբայներուն դէմ : Պ . Տիւբանուի հը-
 րաժեշտի գիրն այն եղաւ Գաղղիական կղերին ինչ
 որ Ֆուլդայի ցոյցն եղած էր Գերմանիոյ համար :
 Նոր վարդապետութեան անպատշաճութիւնը ցոյց
 տալով՝ Օուլէանայ եպիսկոպոսին մատուցած բոլոր
 ծառայութիւնքը Պապին առջեւ ՚ի չիք դարձան
 անշուշտ, նոյն իսկ անոր աշխարհական իշխանու-
 թիւնը պաշտպանելու համար ըրած ջանքերը : Ոչ
 ծերութիւն եւ ոչ դառն հիւանդութիւնք կրցած
 են Պ . աբ Մոնդալանպէտայ եւանդը մեղմել . իր
 կուսակցութեան էն քաջամարտիկներէն մէկն է,
 եւ արդարեւ էն յանդուգն ազատականը : Սօի
 յայտնի եղաւ այն նամակին մէջ զոր Գերմանացի
 Հռովմէադաւանաց ուղղեց, իրենց նախագիրն ըս-
 տորագրելու համար : Պ . Աուսօ (Աուիէժցի), որ
 երկար ատենէ ի վեր Պապին աշխարհական իշխա-
 նութեանը դէմ կը մարտնչէ, անսխալականութեան

վարդապետութիւնը անարդարանալի հաւակնու-
 թիւն կը կարծէ . Եկեղեցի « Եւրոպայի » արտ-
 ղոսով հրատարակած գրքին մէջ կը ցուցնէ թէ ինչ
 խոր անդունդ փորեցին Եկեղեցոյ եւ արքի ընկեր-
 ւեան մէջ Յեռոսի վարդապետը եւ անոնց շրջա-
 բերականք : Պ . աբ Նանսիի ազատական խումբին
 անդամներէն մէկը, Մէյ Նոպլա, զազատութիւն
 եւ զեկեղեցի իրարմէ անջատել չուզողներու խղճի
 սաղմապներն այսպէս կը բացատրէր . ինչ պիտի
 ըլլայ երբ մարդ ալ չը կրնայ ըսել . ես հռովմէա-
 դաւան եմ, եւ սակայն եկեղեցւոյ իշխանութիւնն
 ի վերայ տերութեան չեմ ուզեր հաստատել : » Ե-
 թէ Մ . աբ Մէնոպլայի համար բաժակը լի է ար-
 դէն, զարմանալի չէ որ յորդած է հայր կիսաէն-
 թայ համար, հռովմէադաւան բեմին այն առաջին
 քարոզիչը, որ մարտնչեցաւ Հռովմայ բռնութեանը
 դէմ, յորմէ ուղղակի կախում ունէր իր կացու-
 թեանը բերմամբ : Այդ մեծ դործին դէմ, որ զոհ
 մըն է ամեն բանէ առաջ, շատ վեճեր յարուցին,
 մանաւանդ մեր երկրին պէս լատինացեալ երկրի
 մը մէջ, որ չե՞ « օւ՛ն » կըսէ եւ ազնիւ ձեռնարկու-
 թիւններ չ'ընդունիր երբէք : Ըսին թէ տարածամ
 էր այդ, իբր թէ խղճի ժամը նոյն իսկ Աստուծոյ
 ժամը չ'ըլլար, իբր թէ բոլոր երկրորդական պատ-
 ճառք իր համոզմանց հաւատարիմ ըլլալու պար-
 տաւորութեանն առջեւ չէին եղծուեր : Ըստ մեզ,
 հայր կիսաէնթ բարձրաձայն ըսաւ ինչ որ ամեն
 ազատամիտ հռովմէադաւան քիչ շատ սքօղեալ բա-
 ուերով կրնացնէ . իր առ Բրիտանոս ըրած կոչումը
 որոշիչ խօսք մնն է, որոյ պատուը սպազային մէջ
 պիտի տեսնուի :

Հոռո՞, ինչպէս յայտնի է, այս պատրաստու-
թեան պահուն անգործ չը մնաց, որչափ աւելի
մտաբերէր, զայն իր նպատակաց ծառայեցնել,
նոյնչափ յաւիտենական վնասց կը նմանեցնէր վաղ-
վաղակի։ Այս է սուրբ հօր համոզումը, որ իր կը-
րօնական հաւատոյն ուղղակի վերջին ծայր թէւն-
բխերու մասին մէջ կը դատուի։ Չը կրնար կենալ
այն պարզ բարձրութեանց վրայ՝ ուր կանգ առ-
նուլ կըստիպուի մեծ եկեղեցւոյ մը քահանայա-
պետն, ինչպէս եւ մեծ երկրի մը վեհապետը, չա-
փառ որ իշխանութիւն մը բանեցնելու համար։ Ո՛չ,
Պասլը կը վարուի իբր մեծաւոր Անդրաբեռնեացց։
Անշուշտ ինք ալ քաղաքական կամ կրօնական կու-
տակցութեանց գլխաւորներուն պէս՝ աւելի մըման
կը հետեւի քան կը մտէ։ Յիսուսեանք այնչափ
թանկագին սրչափ անկեղծ պաշտպան մը գտին ի
նա։ Անկէ աւելի ուղիղ, անկէ աւելի սուր մարդ-
չը կրնար ըլլալ։ Բարութեան պատկոյ դարդար-
ութեամբ է իր ճակատը, իր ընդունթիւնն հայրենա-
կան է, եւ իշխանութեամբ ու ընտանութեամբ
խառն։ Իր բարեպաշտութիւնը խոր է, այլ այն-
չափ կայր որչափ Հոռոյ պիղբերուն էն յետին շե-
նականին բարեպաշտութիւնը։ Տեսակ մը ներշնչ-
մամբ գործած է միշտ, իր սղատականութեան ու
ժողովրդակեանութեան օրերուն մէջ իսկ՝ ամենա-
պարզ գործոյ մը վրայ որոշում տալէ առաջ, իր
քովի խաչին խորհուրդ կը հարցնէր, որ շատ վը-
տանգաւոր եղանակ մըն է կառավարութեան այն-
բիտի պարագայից մէջ յորս՝ միտք ու դատողու-
թիւն միայն կրնան վճիռ հատանել։ « Բաղաքա-
կանութեանց ստորնութեանցը մէջ երկնից վեհմու-

թիւնքը կը դնէ միշտ » կըսէր իր հին պաշտօնեայ-
ներէն մէկը։ Այս դիւրավտիտիս ու վաւառուն
ընաւորութեամբ կրնայ մեկնուիլ Պասլին 1849ի
շարժումէն վերջն իր դաղափարները փոխելը։ Ան-
կէց ի վեր, կայեդ Պիոս Թի Սինայն եղաւ. նոր
Մովսէսի մը պէս՝ հոն յեղափոխութեանց փայլա-
կանց լաւոյն կարծեց օրինաց աստակներն ըն-
դունել։ Յիսուսեանք Սէլուսի վարդապետու-
թիւնքը գրեցին հոն, եւ սուրբ հայրը՝ զԱստուած
պաշտպանել կը կարծեն զանոնք քարոզելով, զի
իւր բոլոր խղճովը կը քարոզէ։ Գրեթէ իր բարե-
պաշտութեան հրովը կը որբէ Յիսուսին հաշիւները։
որ շատ տարբեր սեռի կը վերաբերին։ Երբ իր
հաւատն ընդ խաղով չիյնիր՝ ինք բարի է ցլան-
դաղապանն։ այլ կրօնական պատճառներ կրնան
վերջին ծայր զայրոյթ ազդել իրեն։ Այս ժամա-
նակաց մէջ Հոռո՞ական եկեղեցին չէր կրնար ու-
նենալ Պասլ մը անկէ աւելի յարդելի եւ ասկէ ա-
ւելի վտանգաւոր։ Աւելի ճիշտ ու լոխտ կրօնա-
ւոր քան թէ աստուածաբան, եկեղեցական պատ-
մութեան խիստ քիչ հմուտ է. ուղղակի դէպ իր
նպատակը կ'ընթանայ՝ առանց որ եւ է դիտողու-
թեան առջեւ կասելու. ասոր համար է որ ժողո-
վոյն պատրաստութեանն ու ընթացից մեջամտեց
այնչափ անյողողոյ ու կրքոտ եղանակաւ։
1869 դեկտեմբեր թէն շատ առաջ Պասլն ինք
դինք աշակողմեան վերջնածայրին համախոհ ծա-
նուցած էր, համառօտ նամակի մը մէջ զոր առ Պ.
Տըշան ուղղած էր, սրբոյն Պետրոսի յաջորդին ան-
որխաղականութեամբ վրայ այդ եպիսկոպոսին հը-
րամարակած մէկ տեսքին առ թիւ, նաեւ Չիլէրու

Գաթուխու որ ինչպէս ըսինք, բարձրագոյն հրամանն աւ կազմակերպեալ Պապական հաստատութիւն մըն է, Պիոս Թի գաղափարները կը հրատարակէր ամեն օր, եւ թէ ոչ անոր հրամանաւ, գէթ անոր կուսակցութեամբն է որ հրատարակեց այն հռչակաւոր նախագիրն, որ այնչափ ընդգիմութիւն յարոյց։ Պապը, հրաւերի թուղթերն առաքելէ յետոյ, հարցարան մը շարժեց եպիսկոպոսաց յորում իր խորհուրդները կհասլ չափ կը յայտնէր. զի այդ գրին մէջ ակնարկութիւններ կան քաղաքային ամուսնութիւնն, աշխարհական դպրոցները ջնջելու միջոցներուն, հերետիկոս ծառայից՝ բարեպաշտ տանց մէջ մուտ գանելէն ծագող վտանգին, եւ գերեզմանաց պղծութեան նկատմամբ, յորս Հռոմէական չեղոյններն ալ կը թողուն։ Պապին՝ ընդհանուր աշխարհի եպիսկոպոսացն հետ այս մասին խորհրդակցիլ ուղերուն պէս խեղճ բան չը կրնար ըլլալ։ Կ'երեւի որ լոկ հոգեւոր գերութեան կապերը կուղէ ամբայնել առանց ժամանակի մեծ խնդիրներէն մէկը շօշափելու։

Ժողովէն առաջ սուրբ հայրը մասնաւոր խնամ տարաւ կազմակերպել այն միաբանութիւնները որք գործակցելու պիտի կոչուէին միժիւններուն, զորս յետոյ բարձրագոյն ժողով մը պիտի քննէր։ Այս միաբանութիւնք իրենց մէջ գործն այնպէս բաժնեցին որ հաւաստոյ, ընկերական բարոյականի եւ կարգադրութեան վերաբերեալ ամեն կէտերու վրայ պատրաստ ձեւեր կրնան ձարել։ Կարգինալներ կը նախագահէին եւ Չէլէրու Գաթուխու մեծ վարդապետները կը ներշնչէին բոլորովին այդ միաբանութեանց, որք զանազան աշխարհաց աստուա-

ծարաններէ եւ հռոմէական առաջնորդներէ միայն կազմուած էին։ Կը յուսացուէր թէ ժողովոյն գործըն այնչափ պիտի թեթեւցէին մինչ զի անոնց աշխատութիւնը վաւերացնելով զո՞հ պիտի ըլլաին ժողովականք։ Եւստին դպիրներն իրենց հրատարակութեանց մէջ շատ կը յամաւէին թէ ժողովոյ մ'ընտիր ըլլալը քիչ ատենէն ամեն բան լըմնցնելէն յայտնի կըլլայ, նաեւ Չէլէրու Գաթուխու յայտնապէս կըսէր թէ զիսաւոր որոշմանց հաւանութիւն տալու է միաձայն առանց վիճելու։ Այս գաղափարները՝ քիչ շատ նշանակուած էին ժողովոյ առջի օրը մակագրուած միամիտ տեսրի մը մէջ, որ Անգրալեռնեայց գովեստին արժանացաւ։ «Կըսուի թէ կը գըրէր հեղինակը, կան եպիսկոպոսներ՝ որք կը զնչրանան թէ ինչու պարզ քահանայներ սուրբ աթոռոյն պատրաստական աշխատութեանց գաղանթք գիտեն, մինչ դեռ իրենք բոլորովին հմուտ չեն։ Ուրեմն այդ եպիսկոպոսները չե՞ն գիտեր որ իրարմէն ըստ կարգի միկրուենքն է այս, եւ թէ խոհարարը տիրոջմէն աւելի լաւ ճնունդ չտուներ՝ իր պատրաստած խորդիկն տիրոջմէն առաջ տեսնելով, զի տըն այն ատեն կը տեսնէ՝ երբ զայն ուտելու առաւելութիւն ունի։ Ժողովոյն մէջ, եպիսկոպոսք ձայն պիտի ունենան, պարզ քահանայք հաղիւ տեղ պիտի գըտնեն։» Այս խոհանոցի ձրաններէնը յայտնի նշանակութիւն մ'ունէր. Հռոմէական միաբանութիւնք կը ինայէին ժողովոյն ինք իր ձեռօք իր քննութիւնքն քնելու ծանրութիւնը ստորին կղերին գործըն էր այն։ Եպիսկոպոսաց ուրիշ չէր մնար բայց թէ աչքերնին դոյ բազմիլ, իրենց համար պատ-

բաստուած վարդապետական ինձոյքի սեղանին առջեւ : Այս անգամ հռոմէական կղերն իր հիւրերը չէր հաշուած : Պատճառն այն է զի անկարելի էր որ հռոմէադաւանութեան ծոցին մէջ մըտաց այն մեծ շարժումը տիեզերական յուժեան յանգ էր : Սկզբնական վէճերու ատեն իրարու բաղխուած դանազան միտմունք ժողովոյն մէջ իրարու հանդիպեցան միահամուռ : Մեծադոյն մատուցին անչուշտ Մնդրայեռնեայք ի շնորհս առաքելական փոխանորդաց : այլ Գերմանացի եպիսկոպոսաց վարչութեան տակ՝ ձախ կեդրոն մը կը կազմուէր, որոյ կը մասնակցէին մէկ քանի Մնկլո— Սաքսոն առաջնորդեր, յորս նշանաւոր է մանաւանդ Սալաննահայ եպիսկոպոսն, ինչպէս եւ ամենէն նշանաւոր Գաղղիայի եպիսկոպոսը՝ որոց գլուխն է Պ. Տիւբանլու : Ի՞նչ մը անդին ձախ կողմը կը բաղմին Հունգարացիք : Լատիններէնի շատ սովոր ըլլալով մեծ առաւելութիւն մ'ունէին անոնք, զի խիստ լաւ կը խօսին Հէյնալոյ այլ քեպիսկոպոսն այդ լեզուին մէջէն ազատութեան այնպիսի ձայներ քաղեց՝ որք զիբօքականս գողացուցին : Սակայն եւ այնպէս՝ այս հատուածին երեւելի առենախօսն է Պ. Սքոսմայէն, եպիսկոպոս Սարինամայ : Ժողովոյն դռները մէկ քանի ծեղկեր ունին կարծես, յորոց կրցան դուրս ելնել պերճախօս խովադին կրակոտ խօսքերն, ընդդէմ ժողովոյն վրայ դրուած կանոնաց եւ հռոմէական միաբանութեան գործառնութեանց :

Հարկ է գիտնալ թէ վիճաբանութեան ազատութիւնը խեղդելու համար ամէն բան հրաշարի կերպով կարգելու դրած էին : Նախ, ժողովատեղին

այնչափ անարմար է որ առենախօսութեանց մեծ մասը չեն լուիր : վիճաբանութիւն ըսուածը վիճաբանութիւն չէ՝ շարք մըն է ճառերու, որք իրարու չեն պատասխաներ, եւ որք վատիկանայ դիւանագրութեանց մէջ պիտի թաղուին : Բոլոր այս դատը շատ գովական է : Սուրբ հայրը իւրաքանչիւր եպիսկոպոսի ժողովոյն կանոնագիրը բաժնած է : Այդ գիրը մեծ ընդդիմութեանց առիթ տուաւ, եւ Հունգարական եպիսկոպոս մը երիցս ի կարգ հրաւիրուեցաւ՝ այս անլուր միջոցներուն դէմ բողոքելուն համար : Պայն ուղղակի առաջարկութեանց յանձնախումբ մ'անուանեց, անդրալեռնականութեան էն ջերմ յարեալ կրօնաւորներէ բաղկացած : Առանց Պայէն հրաման առնելու ազատ չեն՝ ուղած նիւթերնուն վրայ առաջարկութիւններ ընել : Ասի գայլ դնել է եկեղեցւոյ ներկայացուցիչներու բերնին՝ անոնց էն մեծ շահերուն վրայ վճռելու կէտին : Ուրիշ հինգ յանձնախումբներու անուանումը ժողովոյն ձգեցին : Ասոնց երկուքը նշանակութիւն չունին. մէկին պաշտօնն է Հռոմայէն բացակայել ուղող եպիսկոպոսաց պատճառանքը քննել : միւսը՝ որ հաշտարար կը կոչուի, անոնց մէջ պատահած կռիւները դատելու համար է : Այս վերջինը շատ կարեւոր էր Դռէնդայ ժողովոյն մէջ, յորում երկու եպիսկոպոսներ իրարու մօրուք փետտել սկսան՝ վարդապետական վէճի մը համար : Միւս յանձնախումբները՝ հաւատոյ, պաշտօններու եւ կարգադրութեան կը վերաբերին : Յանկերն առաջուց պատրաստուած, եւ փոքր մասի ազատականք դուրս ձգուած էին : Նաեւ առաջուց այնպէս կարգի դրած էին, որ յանձնա

խումբները մեծ կարեւորութիւն չունենան : Ժողովոյ մատուցուած խնդիրներն իրենց չեն յանձներ պատրաստելու ազատաբար . Հռոմէական միաբանութեանց տրուած է այդ : Դատավճիռք (Է. Կար) ամբողջ ժողովոյն կը ներկայացունին , եւ ծանրը երկպառակութեանց ատեն միայն կը միջամբտեն յանձնախումբք : Յայտ է թէ այս եղանակաւ նպատակինն որչափ կրնան յառաջ տանիլ աճապարելով : Նիտտերուն նախագահող կարգինալք՝ դիւտատորական իշխանութիւն մ'ունին , եւ կրցածնին ի դործ կը դնեն՝ վիճաբանութիւնները սահմանափակելու համար : Ամեն դիւրութիւն ունին Մեղրալեռնեայք , իսկ հակառակորդք՝ ոչինչ : Ժողովը հազիւ բացուած , եւ ահա Էնդիս միաբանութեան մէկ որոշումը լուսեցաւ , որ հակառակորդաց ցոյցերը կը դատապարտէր եւ Յոսի կարկարալը կարգիւէր , այն ժամուն՝ յորում Յիսուեանց դեղարանին արդիւնքովը քաղաքը լեցուած է : Ասկէ աւելի ցաւելի է որ Մալինայ արքեպիսկոպոսն ու Պ . Մաննինկ ուղածնուն չափ կրնային յարձակիլ Պ . Տիւբանլուի դէմ , եւ սա թողտուութիւն չունէր պատասխանել հրապարակաւ : Այսպէս կը պատերազմին , այլ այն պայմանաւ որ թըշնամին անգէն ըլլայ : Հռոմայ եկեղեցեաց մէջ Բօադիէի եւ Գիւլլայ եպիսկոպոսք անէճք կորոտան ազատական հռոմէագաւանայ դէմ , մինչ ասոնք յաւիտենական քաղաքին մէջ լուռ մնալու դատապարտուած են : Անոնք իրաւունք ունին ամենայն ազատութեան , ասոնք բնաւ իրաւունք չունին : Արդիւրուած է որ մի եւ նոյն աղղէ եղող եպիսկոպոսք հաւաքունն ու խորհրդակցին , ասի խիստ

չատ օգտակար է վատիկանէն իրենց նշանաբանն) առնողներու : կըսուի թէ վարդապետական վէճերը դրաւոր պիտի ըլլան այլ ժողովոյն ազատութեանը դէմէն մեծ փորձը՝ բացմանէն քանի մը օր ետքը Հռոմայ պատերուն վրայ երեւցած թուղթըն է , որ Սեւալեան վարդապետութիւնքը մեր ժողները կամ Պապին էն շնջին հրովարտակին վրայ դիտողութիւն ընողները բանադրել կըսպանար : Այսպէս Պապն առաջուց կ'ապահովէր այն խնդրոց մէկ մասը՝ զորս միտք ունէր ժողովոյն ներկայացնել :

Կը հարցնեն թէ ի՞նչ հարկ ունէինք , այսպիսի ոչ անկախ ներկայացուցիչներուն : Պ . Թիէու օր մը մեծ իրաւամբ կրէր թէ բան մը կայ՝ որ խօսարան չըլլայէն ալ գէշ է , այն է առ երեւոյթ խօսարան մը , որ ուրիշ բան չըներ բայց եթէ երազել : Այսպէս է ահա վատիկանայ մեծ ժողովը : Ամենէն աւելի ճնշեալ վարչական խորհուրդէն աւելի ճնշեալ է այն : Երեւակայեցէք օրէնսդիր ժողով մը՝ որ եւ ոչ առաջարկութիւն մը կարելի է ընելաւանց հաւանութեան վեհապետին , ուր ուղղակի հարցման իրաւունքը չը կայ , ուր յանձնախումբներն առ ոչինչ համարուին , ուր ընդդիմութիւնն չը կրնայ իր ձայնը հնչել , ուր ամեն ազատական ցոյց խեղդուի . աշխարհի ծաղուոյն առարկայ կըլլայ անշուշտ , եւ ոչ այլ ինչ : Տխուր է խորհիլ թէ այն ժողովը , որ ամենէն աւելի ազատական ըլլալու էր , զի խղճին էն շատ մօտ եղող խնդիրները կը շօշափէ , այն ժողովը յետին խօսարանէն ալ վար է : Սոյն օրինակ կազմակերպութեան մ'առջեւ կարելի է չը յիշել առաքելոյն խօսքը . « ուր

Քրիստոսի ոգին է անդ ազատութիւն : »

Քիչ կամ շատ անվաւեր անգաղտնապահութեանց շնորհիւ՝ չենք ուզեր գուշակել ինչ որ ժողովին մէջ վիճուեցաւ բացմանէն ի վեր : Յայտնի է թէ փոքր մասը հզօր վիճաբանութիւններ ըրաւ կանոնադրին ու կարգադրութեան մէկ քանի կէտերուն վրայ, եւ թէ Հռոմէական մասն անհամբեր է խլել անոնցմէ այն բանը, զոր կրօնական վիճաբան մը « ազատութիւն չարեաց » կանուանէր : Քաղաքական իշխանութեան ու եկեղեցւոյ յարաբերութեանց վրայ պատրաստուած վրէժիւններն ամեն նախադուշակութենէ վեր են : կրօնի թէ ամենէն բացարձակ կրօնական բըռնութիւնը կը տրամադրեն : Էն ծանր դէպքը Պապին անխալականութեան համար մատուցուած խնդրագիրն է, որ իր ընթացքը կը շարունակէ : Ասի կը յայտնէ որ մեծագոյն մասը բանի տեղ չը դնէր 150 եպիսկոպոսաց ընդդիմութիւնը, որք այդ խնայրագրին դէմ կը բողոքեն հակառակ խնդրագրի մը մէջ : Ոմանք կը յուսան թէ այս վտանգաւոր խնդրոյն վրայ ժողովը որոշում չի պիտի տայ : Բայց իրաց այս վիճակին մէջ, անկարելի է որ լուրի այն ատեն պիտի ըսուի թէ ինչ բանի կը ծառայէ ժողով մը՝ որ վերին լոյսերու կը յաւակնի, մինչ չը կրնար լուծել եկեղեցական կամ վարդապետական խնդիրներ՝ երբ ծանր են անոնք, եւ վասն զի ծանր են : Անոնք որք իբր յաղթանակ մը, այդ խնդրոյն անորոշ մնալուն վրայ ցնծան, ժողովային հեղինակութեան անկարողութեանը վրայ խնդացած կը լլան : Միւս կողմանէ, դիտենք ինչեր կը ծագին՝ եթէ այդ ան-

տրխալականութեան խնդիրն ընդունուի : Երկդիմութեան, առաձգական ձեւերու պիտի դիմեն ուրեմն : Զո՞վ խաբած պիտի ըլլան ասով : Զե՞ն գիտեր թէ Պապին կոնդակները շուտով մեկնութիւն մը կը գտնեն, որ այդ երկդիմութեանց ճիշտ սահմանը կը համարուի : Ժողովը ետ ձգել կը խորհին՝ իբր դեղ : Եթէ այս յետաձգութիւնն ստոյգ լուծում մը չըլլայ, գէթ դժուարութիւններն ու շացնելու եւ ծանրացնելու պատճառ կը լլայ : Լուծումն անկարողութեան խոստովանութիւն մը կը լլայ, որ շատ աղետաբեր կրնայ ըլլալ արդի հռոմէագաւանութեան : Ճգնաժամը իստ ծանրակը շիւ է, ինչպէս որ կը տեսնենք : Ճանչեցի՞նք ազատական հռոմէագաւանութեան բացարձակ թըշնամիներն, որք ըստ Պ. եպիսկոպոսին Օռէանայ, հռոմէացիներու զորավիգներն են : Պ. արքայն կը ուղարկի իր նախորդ երկու նամակաց մէջ այսպէս կը նկարագրէ զայն ձգտումը, որ հետզհետէ աճելու վրայ է այժմ : « Ստութիւնը որո՞ն կրնայ օգտակար ըլլալ. Աստուծոյ, եկեղեցւոյ, Պապութեան : Ո՞չ Պապութիւնը, ո՞չ եկեղեցին եւ ո՞չ Աստուած կ'ընդունի զստութիւն : Նո՞ւրիւնք ինչե՞ր ճե՞ր Տե՞ր... Գե՞ր... : Այսօր տասերկու առաքելոց մէկին, այսինքն անոր որ մեծագոյնն է յաչս ամենեցուն, այդ առաքելոյն շողոքորթները կարծես թէ կրան քրիստոնեաց ժողովրդեան : Ամենայն ինչէ նա . իսկ այլք՝ ոչ ինչ (1) . . . հիմայ լաւ

(1) « Ինչ պիտի ըսես, ինչ պիտի պատասխանես դու Քրիստոսի, ճշմարիտ գլխուն ընդհանուր եկեղեցւոյ, վերջի դատաստանին օրը, դու որ ջանացիր քեզի ստու-

կը հասկնամ թէ ինչու մեր հիսաւքանչ մայրը , սուրբ եկեղեցին Աստուծոյ , մարդկութեան այդ մայրը ,

բակալեւ անոր ամէն անդամները ընդհանուր անունը քեզի սեփականելով : Այդ ապականեալ պատուանունը գործածելով , որո՞ւ կուզես հետեւիլ անոր՝ որ իրեն հաւասար ստեղծուած հրեշտակները արձանարհելով կուզէ անկարելի եղականութեան բարձրունքը հասնել : »

Գրեթէր Պատ . ինչպէս առ Յովնանէս Պահոյ Պատրիարք Կոստանդնուսոյ :

« Բացարձակ կըսեմ , ո՞ եւ իցէ մարդ որ ընդհանուր եպիսկոպոս կուզէ ըլլալ , կը բարբառնէ , վասն զի ընդհանուր եպիսկոպոսի տիտղոսը ամբարտաւանութեան տիտղոս մի է , հպարտութեան բան մի է , սխալմանց անուն մը , կեղծաւորութեան անուն մը , ունայնութեան անուն մը , հայնոյութեան անուն , վասն զի այդ անունը աւանդը ինքզինքին կուտայ պատուանուն մը որ միայն որդւոյն Աստուծոյ կը վայելէ » : Երեւ

« Իմ նախորդներէս եւ ոչ մէկը յանձն առած է այդ պիղծ անունը վասն զի երբ Պատրիարք մը ընդհանուրի անունը կը պահանջէ , Պատրիարք տիտղոսը ուրիշներուն նախատեսելի կըլլայ : Հեռի Քրիստոսեայ սրտէ մը այնպիսի վախճաք յափշտակելու տիտղոս մը որ իր եղբարց պատիւը քիչ չատ կը պակսեցնէ » :

Մեծն Գրեթէր Պատ—Ինչպէս :

Աղեքսանդրիոյ Պատրիարքը՝ նոյն Գրեթէր առաջինին ընդհանուր եպիսկոպոսի պատուանունը տալուն համար ինքն այսպէս կը պատասխանէ :

« Ինչ որ դու զիս կ'անուանես , ես թէ որ այն ըլլայի , դու ալ եպիսկոպոս չէիր ըլլար , ուրացիր այդ լեզուն որ կարող է ունայնութիւն փչել եւ վիրաւորել զկթութիւնը որ սպարտական ենք մեր եպիսկոպոս եղբարցը : »

որոյ հոգին սւրիչ բան չէ , բայց եթէ ապրած ամեն արդարոց միութիւնը . կը հասկնամ թէ ինչու մեր սիրելի մայրը դեռ այսօր , մարդկային սեռին քսաներորդ մասին վրայ հազիւ կը թագաւորէ : Յապաղման պատճառը՝ այն գրքերն ու գաղտնի թշնամին է , որ մեր ընթացքը կասեցնէ . այն մուրուրեանց դպրոցն է , որոյ անունը ես չեմ տար եւ որ ուրիչ բան չէ բայց եթէ Քրիստոսի նախատեսած խոչընդոսը , — այն դրունք դժոխոց որք զեկեղեցին յաղթահարել պիտի ուզեն , այլ չի պիտի կրնան : Արդ թշնամոյն , անոր գործերուն ու ընթացից ակներեւ տեսնելը զիս յուսով կը ընու : Ահա՞ ծածուկ թշնամին , ահա դիմազուրկ է : »

Դժբաղդաբար այս թշնամին կրնայ դիմակը բանալ եւ միանդամայն յաղթող հանդիսանալ յաւտիկանայ մէջ : Ի՞նչ կելնէ ասկէ : Անկարելի է նախատեսել զայն . կը մտայ մեզ մաղթել՝ որպէս զի հումիւնաւանութեան մէջ քրիստոնէական ազատութեան դրօշը կանգնող անձինք , երբէք զայն վար չառնեն հնազանդութեան պատճառանօք , զի ասով զԱւետարան շփոթել պիտի տան ճշման վարդապետութեան մը հետ , որ ամեն ուղիղ խղճերու կը հակառակի . ասով հեղինակութիւն մը պիտի զոհեն քրիստոնէութեան պատիւն ու ինչ որ փրկութիւնն է արդի ընկերութեան :

ԷՏՄԹՆ ՏԸ ԲՈՒՄԱՆՍԷ



57

Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page. The text is arranged in several paragraphs, but the characters are too light and blurry to be transcribed accurately.

Blank page with a light greenish-grey tint and visible horizontal creases, suggesting it was part of a folded document.

4777

2013

« Ազգային գրադարան



NL0032115

4620